№ 191 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22 — 1905 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22 № 191

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ազգ օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տելեֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախայարձակ լինելը. Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Համառօտ հաշիւ նպաստամատոյց յանձնաժողովի գործունէութեան. 22 օր գերութեան մէջ. Զանգեզուրի աղէտներից. Մինչև ե՞րբ. Թշուառին միշտ թշուառն է մխիթար. Նամակ Հադրութից. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Եկատերինոդարից. Կովկասը և Մամուլը. Նամակներ Խմբագրութեան. ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԱԽԱՅԱՐՁԱԿ ԼԻՆԵԼԸ

—

Մենք նախայարձակ չենք եղել։ Մենք մեզ պաշտպանել ենք։ Մենք միայն յարձակումներին ենք դիմադրել։

Ահա այդ խօսքերով մենք պատասխանում ենք այն բոլոր անձանց, որոնք հայ-թուրքական ընդհարումների համար փորձում են մեղադրել մեզ՝ հայերիս։

Եւ արդարև, մենք պաշտպանվողի և դիմադրողի դերում ենք եղել այն բոլոր աղէտների ժամանակ, որոնք տեղի ունեցան վերջին ութ ամիսներում։

Մեր դիմումների մէջ, որ արել ենք պաշտօնական անձանց և հիմնարկութիւններին, մենք յայտնել ենք, որ մենք մի նպատակ ունենք՝ ապահովելու մեզ ուրիշների յարձակումներից, միջոցներ ունենալու ինքնապաշտպանութեան համար։

Մենք ցանկութիւն չենք ունեցել մեր հարևանին կողոպտելու և սպանելու, նրա տունը աւերելու և հրդեհելու։ Ուստի և չէինք կարող նախայարձակ լինել։

Բայց այնտեղ, ուր մի քանի օր, կամ մի քանի շաբաթ շարունակվում են ընդհարումները, ուր հրոսակները շարժվում են տեղից տեղ և դարանամուտ եղած հետևում են սպանութիւններ և աւերումներ առաջ բերելու, անշուշտ կարող են տեղի ունենալ յարձակողական գործողութիւններ, որոնք ըստ էութեան կը լինեն շարունակութիւն սկսված մաքառման և իրարանցումների։ Այդպիսի դէպքերում մասնաւոր յարձակողական գործողութիւնները չեն կարող նկատվել, իբրև նախաձեռնութիւն, իբրև չարամիտ սկզբնաւորութիւն։

Եւ այդ եղանակով էլ մենք բացատրել ենք այն մի քանի դէպքերը, երբ հայերը կատարել են յարձակողական շարժումներ թուրքերի վրա, որովհետև մենք երբէք չէինք կարող հաշվել այն մտքի հետ թէ հայերը սպանութիւնների և աւերումների հեղինակներ կը հանդիսանան մեր երկրում։

Սակայն մեզ ուզում են հաւատացնել թէ եղել են դէպքեր, երբ հայերը նախայարձակ են եղել։

Եթէ ճիշդ է, որ այդպիսի դէպքեր տեղի են ունեցել, դա նշանակում է, որ առանձին անհատներ իրանց զայրոյթի րոպէներում բոլորովին խելագարված և գլուխները կորցրած են եղել, կամ նրանք վայրենացել են և իրանք էլ չը գիտեն թէ ինչ են կատարել։

Սակայն կան լուրջ հանգամանքներ, որտեղ մարդիկ իրաւունք չունեն այնպիսի քայլեր անել, որոնք կրում են չափազանց պատասխանատու բնաւորութիւն և ունեն բարոյական հիմնական նշանակութիւն։

Մենք մեր այս տխուր օրերում մի բանով պարծենում ենք, որ մենք դազաններ, աւազակներ, աւերողներ չենք և որ, ընդհակառակը, մենք մաքառում ենք դազանների, աւազակների և աւերողների դէմ։ Մենք մեր խնդիրներում և ուղերձներում, մեր լրագրական յօդուածներում, մեր առօրեայ խօսակցութիւնների, խաղաղացման յանձնաժողովներում և ամեն տեղ ընդդիմում ենք մեր հիմնական բողոքը ընդհարումների դէմ, ուստի և չենք կարող նրանց նախաձեռնողը լինել։

Այնու ամենայնիւ կարևոր ենք համարում յիշեցնել մեր դործողներին, որ նրանք մի աւելորդ անգամ զգուշացնեն բոլորին չը շեղվելու այն հիմնական սկզբունքից, որին մենք միշտ հաւատարիմ ենք եղել՝ խուսափելու եղբայրադաւ ընդհարումներից և սև բիծ չը բառնալու մեզ վրա, մեր բարի համբաւի վրա։

Մենք կարող ենք տանել Բագուի ոստիկանների զրպարտութիւնները, որ իբր թէ հայերն են եղել նախայարձակներ. դրանք ստութիւններ են, որոնք ժամանակով կը մերկացվեն։ Մեր խիղճը այդտեղ հանգիստ է և մենք միայն զրպարտութեան զոհեր ենք։

Բայց ծանր կը լինի մեր խղճի համար, եթէ արդարև մենք մեղանչած լինենք մեր առաջ մղած սկզբունքների դէմ։

Թող առանձին անհատները լաւ հասկանան, որ նրանց սխալների պատճառով կոտրվում է հայի անունը և մենք կորցնում ենք մեր բարոյական դատը։ Որքան էլ մենք ուզենանք մեզ արդարացնել բացառութիւններով, բայց մեր ամենամեծ ոյժը այն բանում կը լինի, երբ մենք չենք ունենայ ներկայ դէպքում նոյն իսկ բացառութիւններ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Երեւան, սեպտեմբերի 19-ին

Դիշերն անցաւ խաղաղ, լռութիւնը մինչև անգամ չը խանգարվեց հրացանաձգութիւններով, մի բան, որը շատ սովորական էր դառել Երևանի համար վերջին ամիսների ընթացքում։ Այսօր շուկան չը բացվեց, բոլոր խանութները փակ մնացին ամբողջ օրը։ Մրգերով լցված և ամբոխով լի մեյդանը մեռած դրութեան մէջ էր։ Մրգերի վաճառքը տեղափոխվել էր թաղերի մէջ։ Կարգը չը խանգարվեց քաղաքում, թուրքեր քիչ էին դուրս գալիս։ Չը նայած այս բոլորին, այսօր վիրաւորվեց մի թուրք, և առաւօտը յայտնի եղաւ մի հայի խանութի կողոպուտը թուրք խանութպանների շարքում։ Բացել էին Վ. Տէր-Աստուածատրեանի խանութի դուռը, դատարկել էին արժէքաւոր ապրանքներ, նաև բաւականաչափ շաքար, իսկ մնացած ապրանքը կոխ տուել ոտներով և փչացրել։ Այս դէպքը ստիպեց եղբ. Սֆրիկեաններին դատարկել իրանց խանութը, որը շարունակում էր մնալ մի բաւականին անապահով տեղում, մանաւանդ հրդեհելու երկիւղից մինչև այժմս էլ հայերը ազատ չեն։

Այսօր գեներալ-նահանգապետ պրինց Նապոլէոն իր մօտ կանչելով խաղաղարար կոմիսիայի հայ և թուրք անդամներին՝ խիստ սպառնալիքով պահանջեց խաղաղացնել մտքերը և յորդորել հեռու մնալ կարգը նորից խանգարելու մտքից, հակառակ դէպքում զօրքը կը դիմի զէնքի, որը կարող է աղէտաւոր լինել ամբողջ քաղաքի համար։ Պատմում են, որ պրինց Նապոլէոնը վրդովված մինչև անգամ չուզեց լսել կոմիսիայի անդամների կողմից որ և է բացատրութիւն։

Երէկվայ զոհերի թիւը աւելի մեծ էր քան մենք երէկ հաղորդեցինք յատուկ մեր սովորութեան յայտնի զգուշութեամբ։ Երէկ քաղաքային հիւանդանոց տարվել են 5 հայ և 2 թուրք վիրաւորներ, իսկ սպանվածներ եղել են հայերից 2-ը, թուրքերից 7-ը։ Թուրքերից՝ հաշվողներ կան մինչև 15 զոհ, բայց մենք այդ թիւը առաջ ենք բերում վերապահութեամբ։ Ցաւենայն դէպս երկու կողմերի զոհերի թիւը 20-ից պակաս չի լինի։ Անմեղ զոհեր, անմեղ արիւն, որ դեռ ընկնում էք ու հոսում անմիտ կերպով, ապարդիւն նպատակների անունով. արդեօք մի՞ թշվէ, մի վայրկեան տանջվում է այն մարդկանց խիղճը, որոնք նիւթեցին այս չարիքը, ստեղծեցին մարդկային այդպիսի մի սոսկալի սպանդանոց։

Երէվայ ընդհարման պատճառները դարձեալ չեն պարզվում. բուն պատճառը պէտք է փնտռել շարունակվող լարված դրութեան և մինչև այսօր էլ տիրող սարսափներից առաջացող փախէ փախի մէջ։ Ժողովուրդը այնպէս ելեկտրականացած է, որ իւրաքանչիւր չնչին դէպք մեծ իրարանցում և պանիկա է առաջ բերում, ինչպէս որ այսօր քաղաքային այգում մի մեծ շփոթ բարձրացաւ շնորհիւ չարաճճի մի 10—13 տարեկան տղայի թղթեայ տոպրակ օդով լցնելուց և տրաքեցնելուց։ Այժմ պնդողներ կան, որ երէկվայ խռովութիւնը առաջացել է նրանից, որ զինուորները մի փոքր կոպիտ կերպով ցրել են խմբված մարդկանց, որը հեռուից ընդունվել է որպէս ընդհարման սկիզբ։

Մի բան ճիշդ է, որ ճաշից յետոյ, ժամը 3-ի մօտերքը, Հրազդանի միւս ափում ձգված այգիների մէջ հայերը և թուրքերը ընդհարվելով՝ վերջիններից երկուսը սպանվում են։ Այս դէպքից անցնում է ամբողջ երեք ժամ. քաղաքում ամեն ինչ խաղաղ է լինում։ Քաղաքային այգում զբօսնողները ժամը 6-ին նկատում են ցածում, մեյդանի վրա, ուր մեծ մասամբ թուրքեր են խմբվում, մի շփոթ և փախէ փախ այդ կողմից երկու թուրքեր սրերը մերկացրած մտնում են այգի՝ ուղղելով հայերին լկտի հայհոյանքներ և յարձակվելով մէկի վրա։ Օգնութեան են հասնում հայ տղաներ, մի քանի տեղերից ատրճանակներ են արձակվում, ատրճանակներ արձակում են նաև թուրքերը բախկալխանոցից։ Սրերով զինված թուրքերը կարողանում են դուրս պրծնել, բայց մի փոքր բարձրանալով նրանցից մէկը զարկվում է, իսկ միւսը ազատվում։ Աղմուկը անցնում է թաղերը, ուր խմբվում են մի քանի մարդիկ։ Մեյդանում, ուր առաջին անգամ նկատվել է շփոթը, սպանվել է մի նոր-բայազէտցի էշապան հայ տղայ և երկու հոգի էլ վիրաւորվել են։

Առայժմ ձերբակալված են 15-ից աւելի հայեր և թուրքեր։ Թուրքերը այս խնդրում շարժվում են շատ տակտով. նրանք շատ վարպետ կերպով վկաներ են կանգնեցնում և բանտարկել տալիս աչքի ընկնող մարդկանց, թէկուզ անմեղ։

Թեմական դպրոցի տեղի հարցը, որը մինչև այժմ էլ զբաղեցնում էր, այժմ միանգամայն լուրջ կերպարանք ստացաւ։ Հոբիւրաւոր մանուկների անցուդարձը մեյդանի—ընդհարման այդ բազայի միջով—մտատանջութիւն է պատճառելու։ Թէ ինչ ելք պիտի գտնեն, յայտնի չէ, Ոչ դրամ կայ և ոչ էլ յարմար ու մեծ շէնք։

Ահա մի քանի օր է ինչ տեղի ունէին Երևանի նահանգական զեմստվոյին խորհրդակցութեան նիստերը. դեռ չաւարտված տեղի ունեցաւ այս ընդհարումը, որը ամեն ինչ մոռացնել տուեց, և իսկապէս դրանից աւելի մեծ ծաղր լինել չէ կարող, մինչդեռ մի կողմից խորհրդակցութիւններ են կատարվում զեմստվոյին հաստատութիւններ մտցնել Կովկասում, միւս կողմից շարունակում է հոսել արիւն։ Ապա ծաղր չէ ինչ է։

Ա—Դօ

—

Երէկ, սեպտեմբերի 21-ին Շուշուց ստացանք հետևեալ հեռագիրը.

«Այսօր ֆուրգօններով Շուշուց դուրս եկան մօտ 400 հոգի հայեր Ելիսաւետպոլ գնալու. ապահովութեան համար նրանց ուղեկցում է զինուորների մի վաշտ»։

Նահանգապետ Մելիք-Շահնազարեանց

—

Շուշուց հեռագրում են Գարեգին արքեպիս. սեպտ. 21-ին, ցերեկ. ժ. 1 և 38 րոպէին.

«Բազմաթիւ զինված թուրքեր յանկարծակի յարձակում գործեցին Զանգեզուրի գաւառի Ղարադարասի հայ գիւղի վրա սեպտեմբերի 20-ին։ Սարսափելի կոտորած տեղի ունեցաւ։ Հրդեհաձգութիւնները շարունակվում են։ Զոհերի թիւը անյայտ է։ Մանրամասնութիւններ դեռ չը կան»։

—

Ասխաբադից հեռագրում են մայրաքաղաքի լրագիրներին սեպտեմբերի 16-ից.

Այստեղ խոշոր առևտրական անները, որոնք Պարսկաստանի հետ առևտուր ունեն—Տէր-Մկրտչեանի, Ստուկէնի և Գէորգեանի,—իրանց Մէշէդի ներկայացուցիչներից ստացել են հեռագիրներ ռուսահպատակ մահեդականների և Մէշէդում ապրող հայերի մէջ տիրող յուզված յարաբերութիւնների մասին։ Մագազինները փակված են, գործերը կանգ են առել։ Միակ բանը, որ կարողանում է անել ռուսաց հիւպատոսարանը, դա այն է, որ առաջարկում է հայերին մեկնել Պարսկաստանից»։—Դա շատ դիւրին միջոց է, բայց այն ժամանակ ո՞ւր կը գնայ ռուսական առևտուրը Պարսկաստանում, ո՞ւր կը մնան հպատակների շահերի պաշտպանութեան և այլ հարցերը։

—

Բագուից հեռագրում են «Р. Сл.» լրագրին սեպտեմբերի 16-ից.

«Միրզաբէկեանի ծխախոտի գործարանում հայ բանւորները պահանջում են արձակել թուրք բանւորներին, պնդելով, որ խաղաղութիւն կնքել են իրանց հոգեւորականները և ոչ իրանք՝—հայերը, այդ պատճառով էլ իրանք չեն կարող աշխատել թուրքերի հետ։ Դեռ ևս ելք չէ գտնված այդ հարցին։

—

Պետերբուրգի «Новости» լրագիրը հատատ աղբիւրից հաղորդում է, որ անգլիական նաւթարդիւնաբերական ֆիրմաները, որոնք վնասվել են Բագուի անկարգութիւններից, դիպլոմատիական ճանապարհով պահանջ են յայտնում ռուս կառավարութեանը, որ վերադարձվի իրանց բոլոր կորուստները։ Նրանք հիմնվում են այն բանի վրա, որ իրանք սեփական ձեռներեցութեամբ չեն սկսել նաւթի մշակման գործը, այլ ռուս կառավարութեան հրաւէրով։

—

Բագու գիւղ (Գանձակի գաւառ), սեպտեմբերի 17-ին։ Սեպտեմբերի 10-ին Իբսաշլու թուրք գիւղացիք կողոպտեցին ս. Յուսկան նահատակ ուխտատեղում (Բուլանուխ) վանքը։ Տարել են ամեն ինչ. պղծագործել են և այրել սրբերի պատկերները. ջահերն ու խաչկալը փշրել են։ Ես ինչպէս վանքի վերատեսուչ, ասել եմ 15-ին Զագամի կայարանում ներկայացայ խնդրագրով և այրված ու փշրած սրբութիւններով գեներալ-նահանգապետ Տակայշվիլիին։ Գեներալ նահանգապետը բարեհաճեց ընդունել խնդիրս ու բողոքս և ուշադրութեամբ նայեց այն այրած և փշրած սրբութիւններին, որ տարածել էի նրա առաջ։ Խուռն բազմութեան ներկայութեամբ նա ասեց. «դուք հանգիստ մնացէք, մինչև տասն օրը բաւականութիւն կը ստանաք»։

Մ. քահ. Ստեփաննոսեան

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
(1905 թ. փետրվ. 10—սեպտեմբ. 1)։

—

Երբ հայութեան գլխին այնքան անակնկալ կերպով պայթեց առաջին անգամ Բագուում այս տարվայ փետրվարի 6, 7, 8, 9-ին սոսկալի աղէտը, Թիֆլիսում, փետրվ. 10 ին, առաջնորդարանում կայացաւ մի ժողով տեղական ինտելիգենցիայի ներկայացուցիչներից՝ խորհրդակցելու համար թէ ինչ միջոցներ պէտք է առնել, որ աղէտը չը տարածվի և աղէտի ենթարկվածներին օգնութիւն հասցնվի։ Յաջորդ օրը, փետրվ. 11-ին, կայացաւ նոյն տեղը աւելի բազմամարդ ժողով, որ ընտրեց մի նպաստամատոյց յանձնաժողով, բաղկացած 12 անդամներից և 4 փոխ-անդամներից։ Այդ յանձնաժողովը հաստատվեց ամենայն հայոց Կաթողիկոսի կոնդակով, Թիֆլիսի թեմի առաջնորդ սրբազան Գարեգին եպիսկոպոսի նախագահութեամբ։ Ապա յանձնաժողովը ընտրեց փոխ-նախագահ՝ Ս. Մելիք-Աղամեանին, գանձապահ՝ Ա. Մելիք-Աղարեանին և քարտուղար՝ Հ. Առաքելեանին։

Փետրվ. 13-ից յանձնաժողովը սկսեց իր գործունէութիւնը. նա յայտարարեց լրագիրներում իր հաստատութիւնը, կոչումն արեց հայ հասարակութեան մարդասիրական զգացումներին, առանձին մասնաժողով նշանակեց իր անդամների միջից և կողմնակի անձերից— Բագուից փախած աղէտաւորներին՝ օգնութիւն հասցնելու, պաշտպանելու և խնամելու համար։ Յանձնաժողովի նախագահ Թիֆլիսի թեմի սրբազան առաջնորդն ևս շրջաբերականով հրաւէր կարդաց թեմի ժողովրդին՝ ուղարկել իր լուման, յօգուտ իր դժբախտացած եղբայրների։

Ապա յանձնաժողովը հոգ տարաւ ճիշդ նիւթեր հաւաքելու, աղէտի իսկական պատճառները լուսաբանելու և յարաբերութեան մէջ մտաւ այդ առիթով զանազան ձեռնհաս անձանց հետ։

Երբ Բագուի աղէտից յետոյ պայթեցին նախ Նախիջևանի, Երևանի և ապա Շուշու աղէտները, Վեհափառ Հայրապետը հրամայեց յանձնաժողովին շարունակել իր գործունէութիւնը և յօգուտ այդ նոր աղէտներից ճնշված հայերի։

Յանձնաժողովին բուռն աջակցութիւն ցոյց տուեց «Մշակ» լրագրի խմբագրութիւնը, հաստատելով խոշոր գումարներ, թէ յատկապէս յանձնաժողովին հասցնելու համար ստացված՝ և թէ իր հայեցողութեան թողած նուէրների գումարներից։

Յանձնաժողովը ստացել է փետրվ. 13-ից սկսած մինչև 1 օգոստոսի ընդամենը 70,897 ր. 86 կ., իսկ ծախսել է 46,618 ր. 16 կ. ուղարկելով աղէտաւորների համար թէ կանխիկ փող, ալիւր, անհրաժեշտ կարասիք, թէ հասցնելով սանիտարական, բժշկական և իրաւագիտական օգնութիւն, Թէև առ 1-ն օ գոստոսի յանձնաժողովը ունէր առձեռն մօտ 24,000 բուբլի, և դրանից յետոյ ստացաւ դարձեալ «Մշակից» 4000 բուբլի—ուրեմն 28,000 ր., բայց այդ գումարից նա ուղարկեց Շուշի 4000 ր. իսկ մօտ 16,000 ր. յատկացրեց դարձեալ Նախիջևանի գաւառի հայ ընտանի գիւղերին, հայթայթելու համար նրանց տնային անհրաժեշտ կարասիք, երկրագործական գործիքներ, լծկան տաւար, գինու կարասներ և այլն. իսկ երէկ ուղարկեց նորից Շուշի 5000 ր.։ Բացի դրանից աղէտի վայրերից Թիֆլիս փոխած կաթոտեաներին օգնելու համար ևս յանձնեց Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան 1500 բուբլի։ Այդպիսով, յանձնաժողովի միջոցները գրեթէ սպառված են, մինչ Շուշու, Զանգեզուրի և Նախիջևանի գաւառների թշուառ հայ ազգաբնակութեան օգնութեան անագին կարիք կայ։

22 ՕՐ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—

«Աստուծոյ պահած գառը գայլը չի ուտի», ասում է ժողովրդական առածը։

Քանի, քանի հեռագիրներ են ուղարկվել այս ու այն կողմը, բոլորն էլ իզուր են անցել։

Վերջապէս ամսիս 6 ին հասան Բագու, Ռ. Նաւթային ընկերութեան գործարանում ծառայող Կ.-ի կրտսեր եղբայրները։ Գործարանում բոլոր եղողները, մեծ թէ փոքր, շրջապատեցին նորեկներին, ցանկանալով իմանալ դրանց անհետանալու պատճառները։

Աղճատվում էր մարդ, նայելով այդ կնդանի դիակների վրա։ Նրանց շրթունքները կապտել ու չորացել էին ահ ու սարսափից։

Առաքելը, որը աւագն էր դրանց մէջ, Բագուի արական գիմնազիայի V դասարանի աշակերտ, 16 տարեկան, սկսեց պատմել բոլոր անցքերը մի առ մի։

Մենք կտրված լինելով կենտրօնական տեղերից, չէինք իմանում, թէ ինչ էր կատարվում դրսի աշխարհում և ոչ մի տեղեկութիւն չունէինք Շուշի կամ Բագու քաղաքների կոտորածների մասին։ Օգոստոսի 15 ին վարձելով կառք՝ մեկնեցինք Հաղբութ աւանից դէպի Եալախ, որից յետոյ պիտի գնայինք Բագու։

Մեզ ուղեկից էր Թիֆլիսի Ֆելդշերական ուսումնարանի II դասարանի աշակերտ մի ռուս Պէօտր Կրասնօպէրեդցեվ ազգանունով։ Այդ աշակերտը մնաց մեզանից անբաժան մինչև վերջը և նրանից մենք բաժանվեցինք Եալախ հասնելիս, որտեղից ճանապարհվեց Թիֆլիս։ Եթէ չեմ սխալվում, երկու վերստ հեռաւորութեան վրա Աղդամից, հանդիպեցինք 60-ի չափ զինված թուրքերի, որոնց մէջ կար և մի մօլլա։

Մենք սկզբից ուշադրութիւն չը դարձրինք և կամենում էինք անցնել, ենթադրելով որ այդ գիւղի հայանքը կը լինի և կարծելով թէ հաւաքվել են այդտեղ և խօսում են գիւղական հասարակական գործերի մասին։ Երկար չը տևեց այդ և մեր աչքին երևացող խաղաղ գիւղացիները փոխվեցին գազանների։ Յանկարծ այդ թուրքերը շրջապատեցին մեզ և նոր սիստեի հրացանները ուղղեցին ուղիղ մեր կրծքին։ Մենք գլուխներս կորցրինք և չը գիտէինք ինչ անել. նրանք հրամայեցին մեզ կառքից իջնել։ Մենք լեղապատառ եղած, խոկոյն կատարեցինք նրանց կամքը։ Դրանցից մէկը առաջ գալով գոռաց մեզ վրա առաջ գնալ, ցոյց տալով մեզ ճանապարհը։ Երկիւղից մենք սառել ու փայտ էինք դարձել և մեր ուժերը այլ ևս մեզ չէին ծառայում, սակայն ճար չունէինք, սկսեցինք առաջ շարժվել։

Ո՞ւր էին տանում մեզ, կամ ինչ պիտի անէին, մեզանից ոչ ոք չը գիտէր։ «Տարէք ու շան սատակ արէք այդ շան լակոտներին», գոռաց դրանցից մէկը, երևի գլխաւորն էր։ Մեզանից ամենից կրտսերը, 10 տարեկան Խրիստափոր, լսելով թուրքի այդ կատաղի ձայնը, սկսեց ճչալ. նրա ձայնի արձագանքից դուրս թափվեցին մօտ տներից մի քանի կանայք։ Այդ բարի թուրքուհիները, մեզ տեսնելուն պէս, հասկացան բանը ինչումն է և սկսեցին աղաչել ու արտասվել, կարծելով թէ այդպիսով կարող են կակղեցնել քարացած սրտները։ Սակայն իզուր էին նրանց աղերսանքները. այդ կանայք ոչ թէ նպատակին չը հասան, այլ մինչև անգամ մի քանիսը արժանացան հայհոյանքի և ապտակի, հայերի համար բարեխօսել յանդգնելու պատճառով։

Քանի դեռ շարունակվում էր այդ վէճը թուրքերի ու կանանց մէջ, ես հանգամանքից օգտվել կամեցայ, մօտեցայ մօլլային, որը հեռու չէր մեզանից, կարծելով, որ նա աւելի բարի է գտնվի, և ասացի.—«Մօլլա, մենք ինչ մեղք ունենք կամ ում ինչ էինք արել, որ ուզում են մեզ կոտորել» և խնդրեցի խնայել մեզ և այս չարագուշակ դժբախտութիւնից ազատել։ Բայց այդ անսիրտ մարդը ոչ թէ գթութեամբ վերաբերվեց մեզ, այլ բռնեց մեզ և ինձ ասեց. «Դու շուն շան որդի համարձակվում ես դեռ խօսել։ Դուք պատժվում էք ոչ իբրև յանցաւորներ, այլ որպէս հայեր և պիտի կոտորվիք»։ այս ասելուց յետոյ յափշտակեց Խրիստափորի ձեռքից հովանոցը, որ այդ ժամանակ նա ձեռքին տանում էր։

Այս փորձն ևս անաջող անցաւ մեզ համար։ Բօպէները կրիտիքական էին և մենք մահվան էինք դատապարտված։ Մենք այլ ևս ազատվելու ոչ մի ելք չը գտնելով, սկսեցինք գլուխներս խոնարհած, ինչպէս քրէական յանցաւորներ, առանց մի բառ անգամ արտասանելու առաջ գնալ, իսկ մեր դահիճները, որոնք իրանց սուրերը պիտի շուտով ներկէին մեր արիւնով, հետևում էին մեզ ատէպ ատէպ հրացանով հարուած տալով մեր թիկունքին։

Մեր ճակատագիրը չէր որոշել այդտեղ մեռնել մեզ։ Յանկարծ մեր առաջ դուրս եկաւ մի ոմն Բախշի-բէկ Ալիվերդի և ազատեց մեզ դրանց ձեռքից ու տարաւ իր տունը։ Պակաս չէր Բախշի-բեկի կինը իր բարութեամբ։ Մենք գիշերը մնացինք այդ տանը։ Քանիցս անգամ թուրքերը յարձակվեցան ու կրակ բացին այդ տան վրա, պահանջելով մեզ իրանց ձեռքը տալ, հակառակ դէպքում սպառնում էին տունը հրդեհել։

Դողում էինք մենք այդ ժամանակ և բօպէ առ բօպէ սպասում, որ շուտով պիտի մեր կեանքին վերջ տան, բայց այդ քաջարի կինը չը վհատվեց, մեզ հանդստացնում էր և երբեմն ամեն մէկիս սառը ջուր խմեցնում, որպէս չի չը թուլանանք։ Երդվում էր այդ կինը զորանով և երաշխաւորում իրգլխով մեր ապահովութեան համար։

Վերջապէս տեսնելով, որ այդտեղ մեր կեանքը այնքան էլ ապահով չէ, գուցէ և իրանք զոհ գնային մեր պատճառով, դիմեցին հարուստ կալուածատէր ոմն Զուլֆուղար-բեկ Ռուստամբեկովի աջակցութեանը։

Հռչակաւոր ազդեցիկ Զուլֆուղար-բեկը, ո ը Աղ ամի ժողովրդի կողմից մեծ յարգանք է վայելում, իր սեպհական կառքի մէջ, շրջապատած ոտից մինչև գլուխ զինված թուրքերով, մեզ տեղափոխեց իր տունը, որը Աղդամից եօթ վերստ հեռու է։

Այդ ամուրի 50 տարեկան մեր պաշտպանը ընդունեց մեզ որպէս իր հարազատների, ոչ մի բան մեզ և մեր յարմարութեան համար չը խնայեց, մ նչև անգամ ամեն օր իր մի քանի զինված ծառաների ուղեկցութեամբ ուղարկում էր չորսիս էլ իր խաղողի այգիները ըզբօսնելու։

Այդտեղ մենք մնացինք ամբողջ 22 օր։ Երբ մեր խնամատարը իմացաւ գեներալ Տակայշվիլու Աղդամ ժամանելը, իսկոյն և եթ շտապեց յայտնելու նրան մեր մասին։ Մեր այս բարերարի միջնորդութեամբ մենք ներկայացանք գեներալին, որտեղ արձանագրվեց այն ամենը, ինչ որ պատահել էր մեզ հետ և յետոյ գեներալ Տակայշվիլին մէկ թուրք սարիճանաւոր ոմն Աբասբէկ Վէզիրովի և մի քանի զինեալ զինուորների հետ մեզ ճանապարհեց Եալախ։

Այո, ընթերցող, 60 հոգի թուրք աւազակներ կամենում էին չորս անմեղների մահացնել և նրանք պիտի պարձենային որ քաջեր են և սպանել են չորս հոգու 10 ից 17 տարեկան աշակերտների։

Բայց ոչ, թող միայն պարձենայ այն մէկը, որը թէև անձնական կամքի ուժով և յանուն մարդասիրութեան աղատել է չորսիս կեանքը 50 զինված աւազակների ձեռքից։

Ե. Յարութիւնեանց

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԱՂԷՏՆԵՐԻՑ

II

Սեպտեմբերի 11-ին

Անցեալ անգամ կանգ առանք մինքէնդեցի հայերի փախուստի վրա։ Փախուստը դէպի մօտակայ Խնածախ, Քարաշէն, Գօրիս և Ալնձորեակ գիւղը սոսկալի նկարագրութիւն ունի։ Տեսնում ես հեռուից գալիս են մի խումբ մարդիկ. մօտենում են. ծերունի է ոտաբաց, գլուխը ածիլված և մերկ, հետը պառաւ կին՝ գլուխ, երես և ոտներ արիւնաշաղախ ու կապտած։ Իսկ նրանց հետևում են մի քանի տներից մի կերպ ազատված 7—12 տարեկան աղայ և աղջիկ, որոնք քաղցած, ծարաւ ու մերկ երկրորդ կամ երրորդ օրն է, որ ճանապարհ են գալիս, ընները կորցրած ձագուկների պէս՝ կայան են պտտում։

Մինքէնդում ապրող 85 հայ տներից չորս պատեր են մնացել յիշատակ այնտեղի կեանքի. տարված են բոլոր հայերի անասունները և տնային կահ-կարասիներ, որոնք պահվում էին դրացի ծանօթ թուրքերի տներում։ Երկու օր կոտորածից յետոյ, երբ գերեզմանական սարսափ լռութիւնը փարատվեց, պարզվեց, որ հայերից տարվել է 2300 ոչխար, 600 կով և եզ, 140 աւանակ, 60 ձի և 10 ջորի։ Իսկ ընդհանուր գնասը 200000-ից անցնում է։ Ամբողջ կուի և կոտորածի ընթացքում թուրքերից գրեթէ սպանվող չէ եղել, իսկ ինչ վիրաւորներ էլ կան, այն էլ թուրքերի անկանոն խփելուց է եղել։

Կոտորածից 8 օր յետոյ պրինց Լուի Նապոլէօնը մի խումբ կողակներով այցելեց ասերված Մինքէնդը։ Տեսարանն անպատմելի և մարդկային նկարագրութիւններից բարձր։ Բոլոր թագնվածները թէ տների անկիւններից, թէ ժայռերի ծերպերից դուրս եկան նորին բարձրութեան առաջ։ Մեր ամենասիրելի և գթասիրտ առաջնորդը, Ն. վարդապետ Մելիք Թանգեանը ևս ուղեկցում էր պրինցին։ Կանգնած էին գոգանացած մարդու հարուածների տակ կիսամեռ վիրաւոր հայ մարդիկ, կանայք և երեխաներ, որոնց հասցրած տանջանքները իր տեսակով անպատմելի է նկարագրել։ Մարդ և այդպիսի ճիւաղային տանջանքներ հասցնել իր պատկեր կրող մարդուն։ Պրինցը դիտելով իր առաջ կանգնած հայ վիրաւորները և շրջապատող ամայի, աւեր տները, հանեց թաշկինակը և աչքերի արցունքը սրբել սկսեց. իսկ երբ թուրք ամբոխը աղ ու հաց մատոյց, նորին բարձրութիւնը հրեց ոտով նրանց աղ ու հացի ամանները և այս ու այն կողմը ձգեց, բարկացաւ թուրքերի վրա, ասաց, որ էկզէկուցիա կը նշանակվի և բոլոր մեղաւորները կը բռնվեն, ոմանց կը կախեն, մի քանիսներին խիստ կը պատժեն ըստ օրէնքի։

Կոտորածի պատճառ և յորդորող Սադրիս բէգ պրիստաւը իր գրագիր Շամիրի հետ փախել էր Ալխաստու և Մեշնի թուրք գիւղերը նոր աւազակախումբ պատրաստելու և Մինքէնդի մնացած կենդանի մարդկանց էլ կոտորելու, որպէս զի պրինցի առաջ ոչ մի ցուցմունք տուող չը լինի։ Բոլոր կողոպուտներից ինքը պրիստաւը ամենաչաղ կտորներն է վերցրել. իսկ գիւղի միակ յայտնի խանութպան Գաբրիէլ Օհանեանի մանուֆակտուրային բոլոր ապրանքները մի առ մի տարել և պրիստաւի միջոցով զանազան տեղեր պահվել են։ Խանութի ապրանքը 5000 ր. արժողութիւն է ունեցել։

Պրինցի արած հարցերի և հայերի ցուցմունքների վերջը այն եղաւ, որ տեղացի թուրքերից բռնվեցան 33 հոգի, թուրք տաճուտէրների ցեղակիցների հետ միասին, որոնք թալանի առաջին ձեռք զարկողն էին։ Բացի այդ, հետաքրքրում են բռնելու պրիստաւին, գրագրին և մի քանի թուրքերի, որոնք փախել են զանազան կողմեր։ Փախածները մեծ մասամբ տեղաւորված են Խնձորեսկում, ուր Մինքէնդցիք ցեղակիցներ ունեն և մօտիկ Գօրիսում։

Պրինցի հետ գնացել էին աղէտի տեղը, բացի Ն. վարդապետից, այլ և բժիշկ ԵսՁը, ֆելդշեր Մինասը և եղբայրասէր բժիշկ ուսանող պ. Մկրտիչ Պարոնեան, որոնք հիւանդներին ամեն տեսակ օգնութիւն հասցնում, վէրքերը դիտում և ամենայն խնամքով փաթաթում էին։ Ծանր վիրաւորներին բռնում, վեր հանում, վէրքերը լուանում և բժշկին կապել էր խնդրում և մի այլ անձ, որը հեռու տեղից իբրև մխիթարիչ էր հանդիսանում վիրաւոր Մինքէնդցիներին, դա պ. Փարամազն էր, որը իր անուրանալի խնամքի շնորհիւ, սրտապնդող խօսքերի համար արժանացաւ նորին բարձրութեան շնորհակալութեան պատուին։

Պրինցը հետևեալ օրը դարձաւ Գօրիս, հետը բերելով բռնած թուրքերին։ Նորին բարձրութիւնը մտադիր է գիւղերի տեղափոխութիւն անելու, որ դեռ ասվում է առ այժմ։ Պրինցը Տաթևով անցաւ Կապանի (Ղափան) հանքերը, որտեղից Մեղրիով Ագուլիս և ապա Նախիջևան պիտի անցնէ։

Սազանդարեան

(Կը շարունակվի)

ՄԻՆՁԵՒ ԵՐԲ

(Նամակ Երևանից)

—

Գազանութիւնները շարունակվում են...

Ոճիրների դէմ միջոցներ ձեռք չեն առնվում. ադմինիսարական սպառնալիքները այլ ևս ազդեցութիւն չեն թողնում, որովհետև նրանցից և ոչ մէկն էլ չը գործադրվեց։ Այսպէս լինելուց յետոյ չը պէտք է զարմանալ, որ թուրքերի կողմից եղած յարձակումները և սպանութիւնները ոչ միայն չեն սահմանափակվում, այլ և արտայայտվում են տարբեր ձևերի տակ։

Մեր մի պահ լռելը չը պէտք է վերագրել սպանութիւնների և յարձակման դէպքեր տեղի չունենալուն. ոչ, մենք յոգնեցինք արեան և աւերի մասին գրելուց, բայց արիւնը շարունակվում է հոսել և կարծէք ցանկութիւն չը կայ կանգնեցնելու այդ կարմիր հեղեղը։

Սեպտեմբերի 10—11-ին դաշբուռունցի երկու հայեր դէշերելով մի քրդի օբայում, սպանվեցին և դիակները անհետացրին էշխածնի գաւառի սահմաններում թուրքերի ձեռքով։ Սպանվածներից մէկը մի կտրիչ տղայ էր—Նահապետ անունով։ Յայտնի են սպանութեան բոլոր մանրամասնութիւնները, բայց սպանութիւնը չէ բացվում։ Այդ շրջանի պրիստաւը թուրք է։

Սեպտեմբերի 12-ին, Դաւալու գիւղի հանդում, ցանքերը ջրելիս, կենդանի կենդանի բռնեցին և անհետացրին հինգ անմեղ ու կրակ գիւղացիներ, որոնց դիակները մինչև այժմ էլ չը գտնվեց։

Նախիջևանից մեզ հաղորդում են, որ սեպտեմբերի 9 ին, մի անգամ արդէն թալանված և քանի չափ զոհեր տուած Թմբուլ գիւղում զինված թուրքեր մտան Աւա Բաղալեանցի այգին, խաղողը գողացան և մնացածը աւերեցին։ Ժողովուրդը սարսափի մէջ է և ուզում է գաղթել։

Իգդիրից եկողները պատմում են, որ սեպտեմբերի 10-ին քրդերը ինչ որ Ալի Բաշի ղեկավարութեամբ յարձակվեցին Բահարլու գիւղի վրա և քշեցին գիւղի նախիրը, 117 տաւար. քրդերին աջակցեցին Մալաքլու գիւղի թուրքերը։ Դաւառապետը ստրաժնիկներով ընկաւ աւազակների ետևից, բայց ապարդիւն։ Դաւառապետը մինչև անգամ, ասում են, խիստ հրացանաձգութեան հանդիպեց և վերադարձաւ։

Յարձակումները կրկնվում են, սպանութիւնները շարունակվում, կողոպուտները երկարում։ Ապա վերջը։

Փորձը ցոյց է տալիս, որ զօրքի ներկայութիւնը այլ ևս չէ կանգնեցնում նման դէպքերը։

Եւ ինչպէս կարծիք չը կազմեն, քանի որ Նախիջևանի և Շարուրի աշխարհին յայտնի չարագործները մինչև այժմս էլ ազատ են, կողոպտված և աւերված գիւղերը մինչև այժմ էլ յետ չը ստացան իրանց գոյքը, կառավարութեան խոստումները նրանց օգնութեան հասնելու նկատմամբ ի հաշիւ կողոպտող թուրք գիւղերի, չիրագործվեցին, մինչև անգամ այն թուրք պաշտօնեաները, որոնք ադմինիստրացիայի մէջ լինելով՝ բացայայտ աջակցութիւն ցոյց տուին թուրք կողոպտող խուժանին, դեռ ևս իրանց պաշտօններումն են։

Թուրք խուժանի բարբարոսութիւնների դէմ պաշտպանվելու համար երկու միջոց կայ. մէկ զօրքի պաշտպանութիւն, միւսը ինքնապաշտպանութիւն։ Առաջին միջոցը նպատակին չը ծառայեց։ Նախ՝ այդ չափով զօրք, որը հնարաւորութիւն ունենար ամեն տեղ լինել և բոլոր յարձակումները կանգնեցնել, անկարելի է ներմուծել։ Երկրորդ՝ եղած զօրքին չէ կարգադրվում զէնք գործածել խուժանների դէմ և եթէ լինում է կարգադրութիւն, չէ գործադրվում շնորհիւ հսկիչների անհատական տրամադրութեան դէպի հայերը։ Բացի այդ բաւական է, որ թուրքը համոզված է, որ զօրքը իրան չէ խանգարելու, ուրեմն մնում է միակը և վերջին միջոցը—ինքնապաշտպանութիւնը։ Իսկ այդ արգելում են հային։ Այսինքն զրկում են նրան զէնք կրելու իրաւունքից։ Ինքնապաշտպանութիւնը իրական և արմատական միջոց է. բաւական է, որ թուրքը տեսնէ հայի զէնք կրելու թոյլտութիւնը, որ նա միանգամից զսպվի։

Բայց ահա անցնում են ամիսներ, հայ կողոպտված և յօշոտված ժողովուրդը քանիցս դիմումներ է անում բարձր ադմինիստրացիային, խնդրում, աղերսում, պահանջում է զէնք կրելու իրաւունք, բայց նրան մերժում են ու մերժում։

Ա.—Դօ

ԹՇՈՒԱՌԻՆ ՄԻՇՏ ԹՇՈՒԱՌՆ Է ՍԽԻԹԱՐ

(Նամակ խմբագրութեան)

—

Թիֆլիս, սեպտեմբերի 7-ին

Թշուառին միշտ թշուառն է սխիթար։

Ի մեծ սխիթարութիւն բանիմաց հասարակութեան, ռուսաց առաջնակարգ լրագիրները մեծ տեղ են տալիս իրանց թերթերի էջերում Բագու-Բալախանիում տեղի ունեցած մեծ աղէտին, որի շնորհիւ Ռուսաստանի հասարակութեանը և բանուորներին որոշ չափով յայտնի է այն անելանելի դրութիւնը, որի մէջ գտնվում է այդտեղի բանուորութիւնը։ Երկաթի ներվեր պէտք է ունենալ ներկայ լինելու այն սրտաճմլիկ տեսարաններին, որ տեղի էին ունենում այդ բանուորների մէջ։ Երեկվայ իրան քիչ-շատ ապահով համարող բանուորը, բաւական կահ-կարասիք, տնային իրեր ունեցողը, այսօր համարեա թէ մերկ է շրջում և 2—3 օրով քաղցած է մնում։ Ինչպէս յայտնի է, գործերը կը վերսկսվեն ամենաշուտը 8—10 ամսից յետոյ. այդքան ժամանակ մարդիկ հօ չեն կարող քաղցած ու մերկ ապրել, ուստի դրանց մի մասը գնում է Ռուսաստան, Միւսը Պարսկաստան. չէ՞ որ այնտեղ իրանց երկիրն է, իրանց բարեկամների և ծանօթների շրջանը, այնտեղ կարելի է մի կերպ ապրել, իսկ մի աչքի ընկնող մասը, որ բաղկացած է զանազան արհեստներից, ուր վերադառնալու ոչ մի հնարաւորութիւն չը կայ ճանապարհների անապահովութեան պատճառով, ահա դրանց և դրանց նմանների վրա պէտք է դարձնենք մեր ուշադրութիւնը։ Ո՞վ է մտածում դրանց մասին։ Մեր ռնգութ խաղէյինները. Տէրը մի արասցէ, դա նրանց գործը չէ. չէ՞ որ նրանց ուղեղի մէջ պինդ է ցցվել այն համոզմունքը, թէ բանուորը եօլայ կը գնայ, թէկուզ քաղցած ու ծարաւ, ուրեմն ինչու տալ մի քանի մանէթ և ամիսներով քաղցած ընտանիքներ կերակրել, չէ՞ որ նրանց փող շատ ու շատ է հարկաւոր։ Հօ գիտէք, էլի կանանչ սեղանի մօտ նստելիս մանէթներով չեն պրծնի, իսկ այն անիծեալ շանսօնեակաները մինչև որ 25 ր. չեն ստանում, ծիծաղելու եղանակները չեն փոխում, իսկ մեր խաղէյինները առանց դրանց չեն կարողանում եօլա գնալ։

Ուրեմն ի՞նչ անել։

Այստեղ ևս պէտք է նորից երևան գան մեր բանուորները և արհեստաւորները, ցոյց տալու, որ իրանք իրանց կոչման բարձրութեան վրա են կանգնած։ Ձեզ ենք դիմում Ռուսաստանի բոլոր բանուոր եղբայրներ, մի՞թ մոռանայ, որ այսօրվայ մեր քաղցած եղբայրները, Բագու—Բալախանի այն մեծահոդի բանուորներն են, որ աղէտից միմիայն մի քանի օր առաջ չէին խնայում իրանց կօշէկները Գուտիլօվեան գործարանում գործադուլ արած բանուորների համար։ Եկէք նոյնը անենք և մենք չը խնայենք մեր կօշէկները, թեթևացնենք մեր չարաբախտ բանուորների դրութիւնը և նորից կրկնենք մեծ բանաստեղծի խօսքերը, թէ «Թշուառին միշտ թշուառն է սխիթար»։

Դ. Տէր-Դէօրգեան

ՆԱՄԱԿ ՀԱԴՐՈՒԹԻՑ

—

Սեպտեմբերի 1-ին

Չիբրայելի գաւառի հայ և թուրք ազգաբնակութեան միջև տեղի ունեցած ընդհարման մասին ես արդէն գրել էի «Մշակում», թէ ինչպէս սկսվեց և մինչև ուր գնաց։ Այժմ գրում եմ շարունակութիւնը ժամանակագրական կարգով։

Թէ Խրմանջուղում և թէ ընդհանրապէս հարևան միւս հայկական գիւղերում, օր. Դուդուկչի, Էդիլու, Ախցիք, Աղբուլաղ, Խրմանջղ, Գլիթանց, Մելիքջանլու, Քոչբէկ և Վզիրի ապրող չէ մնացել։ Բոլոր ազգաբնակութիւնը հաւաքվել թափվել է Հադրութի ձորը, թողնելով իր կայքը, գոյքը և ամբողջ գիւղական հարստութիւնը անտէր ու անտիրական։ Դրանցից մի քանի գիւղերում միայն կարելի է տեսնել մի քանի հրացանաւորներ, որոնք հսկում են իրանց գիւղերի վրա, այն էլ գիւղերից շատ հեռու, մի թփի կամ մի ժայռի տակ թաքնված...

Կալերը կիսատ, խուրձերը թափթփած, հրդեհի ու կրակի ճարակ դարձած, ցորենը բակերի ու կտուրների վրա հաւերի ու թռչունների կերակուր դարձած, այգիներն անխնամ... Ահա այն գունաւոր պատկերը, որին փոխարինել են մի ժամանակ գեղեցկատեսիլ և շէն հայկական գիւղերը...

Խրմանջուղի կոտորածից մի օր յետոյ թուրքերը նորից պաշարեցին այդ գիւղը և ուզում էին հրդեհից ազատված մնացած տներն էլ այրել։

Լուրը մեզ հասնելով անմիջապէս այնտեղ ուղարկվեց հայ քաջերի մի խումբ, որը գտաւ Խրմանջուղը շրջապատված չորս կողմից։ Թուրքերը մերոնց տեսնելով՝ ուժգին կրակ բաց արին նրանց վրա, բայց դրանով չը կարողացան հայ քաջերին յետ մղել։ Գնդակների տարափի տակ, մերոնք վեր բարձրացան, գրաւեցին գիւղը շրջապատող լեռնաշղթայի մի մասը և երեք խմբակի բաժանվելով՝ արշաւեցին դէպի թուրքերը, որոնք թիւ ու հաւար չունէին։ Երեք կողմից էլ այնպիսի արագութեամբ քշեցին թուրքերին, որ մի ժամվայ մէջ այլ ևս թուրք չը մնաց գիւղի շրջակայքում։

Քշելը բաւական չէր. հայերը հետևեցին նրանց մինչև իրանց գիւղերի շէնքերը և մինչև երեկոյ դիմադրելով նրանց, միջոց տուին հայերին դուրս տանել թալանից ազատ մնացած ապրանքները՝ գլխաւորապէս ցորեն՝ ուտելու համար։ Դա շաբաթ օրն էր, օգոստոսի 27-ին։

Դաւառապետ Ցինբալովի միջնորդութեամբ հաշտութիւն կնքելու համար հայ և թուրք ներկայացուցիչները պէտք է հանդիպէին իրար հէնց այդ օրը երեկոյեան սահմանի վրա։ Թուրքերը գալիս են և դաւառապետի ներկայութեամբ խոստովանում, որ մեղաւորը իրանք թուրքերն են։ Հայերը ոչ մի մեղք չունեն և մենք պէտք է տանք նրանց կրած բոլոր վնասները։

Որովհետև արդէն ուշ է լինում և ոչ ոք չէ վստահանում միւսի մօտ գնալ, ներկայացուցիչները դաւառապետի հետ միասին ժամանակ են գնում երկուշաբթի օրը, ամսի 29-ին, որպէս զի մինչև այդ բոլոր գիւղերից ներկայացուցիչներ հրաւիրեն և հաշտութիւն կնքեն։

Կիրակի օրը անձրևի պատճառով թուրքերը չը շարժվեցին և մենք հաւատալու վրա էինք, թէ հաշտութեան լուրն է նրանց հանգստացրել։ Հոյս երկուշաբթի գիշերը նրանք մտնում են Ղուշչիլար անունով հայ գիւղը (մօտ 25—30 տուն) և մինչև տան դռներն անգամ քանդում տանում։

Երկուշաբթի վաղ առաւօտեան տեղիս մի քանի բանիմաց մարդկանց հետ նստել էինք սենեակում և ուզում էինք մշակել այն պահանջները, որոնցով պէտք է մենք հաշտվէինք։

Դեռ ոչ մի պահանջ չը դրած ու չը մշակած՝ յանկարծ հաւարն ընկան։ Տեսնելով, որ փողոցում սարսափելի իրարանցում է տիրում, դուրս նետվեցինք։ Լսվեցին մի քանի տրաքտրաքոցներ։ Երևաց. որ 8որ գիւղի վրա է յարձակումը։

Իսկոյն հաւաքվեցին մի խումբ ձիաւորներ՝ մօտաւորապէս 30 հոգուց բաղկացած և գնացին։

Ար. Բաղդասարեան

—

Ց. Գ. Թէ Դուդուկչու և թէ գլխաւորապէս Խրմանջուղի 2 կռիւներում ահագին քանակութեամբ յայտնի բէկեր և իւզբաշիներ են ընկել կամ վիրաւորվել։ Դրանց մեծամասնութիւնը առաջնորդելիս են եղել թուրք ասպատակող խուժանին և հէնց այդ է պատճառը, որ ամենից շատ նրանք են տուժել։

Նոյն

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

—

Սեպտեմբերի 10-ին

Սեպտեմբերի 8-ին նշանակված էր մեզանում երկրորդ ժողով՝ հոգաբարձական ընտրութեան համար։ Գործակալ Արտակ վարդապետը այդ մասին գրաւոր յայտարարութիւններ էր կպցրել պատերին, հրաւիրելով ժամը 9-ին ս. Աստուածածին կիսաշէն եկեղեցում ծխականների ժողովը։ Սակայն նշանակված ժամանակին ոչ ոք ինքնակամ չէ բարեհաճում գալ ժողովատեղին, ուր հայր գործակալը քահանայական դասի և մի քանի երիտասարդների հետ սպասում էր։ Վերջի վերջոյ՝ մի քանի երիտասարդներ շրջելով բազարը, ժան խանութները և մէկ մէկ հրաւիրեցին ժողովի և զօռով-խաթրով հաւաքվեցին մօտ 80 հոգի ընտրողներ (աւելի քան 1000 ծխից), որոնք առաջարկելով 10 հոգի հոգաբարձական թեկնածուների համար, թերթիկներով գաղտնի քուէարկութեամբ ընտրեցին 3 հոգաբարձուներ. 1) Ե. Բունիաթեանցին, 2) Գ. Բուդուժանցին և 3) Հ. Տէր-Միքայէլեանցին, իսկ անձնափոխանորդներ՝ Ս. Փոստոյեանցին և Ա. Քօչարեանցին։

Նախ քան ընտրութիւն կայացնելը, Արտակ վարդապետը մի քանի խօսք ասաց դպրոցի և եկեղեցու մասին, աւելացնելով, որ ս. Կարապետ եկեղեցու երէցփոխի պաշտօնավարութեան ժամանակը լրացած լինելով, պէտք է երէցփոխ ընտրել և ապա հոգաբարձուներ։ Ժողովը շնորհակալութիւն յայտնելով այժմեան երէցփոխ պ. Հ. Խաչատրեանցին նրա 15-ամեայ արդիւնաւոր ծառայութեան համար՝ միաձայն վերընտրեց նրան ս. Կարապետ եկեղեցու համար՝ դարձեալ երեք տարի ժամանակով։ Թէ երէցփոխի և թէ հոգաբարձական ընտրութիւնը աջող կարելի է համարել։

Հոգաբարձութիւնը անշուշտ հրաւիրելու է շուտով աւագ ուսուցչի, և ապա վերջինիս խորհրդակցութեամբ՝ նաև միւս ուսուցիչներին։ Բայց պէտք է յիշել, որ մեզանում նոյնպէս կան երիտասարդներ, որոնք իրանց ուսումն աւարտել են թէ թեմական դպրոցում, թէ ճեմարանում և թէ ռուսաց հոգևոր սեմինարիայում և Ներսիսեան դպրոցում։ Սրանք նոյնպէս կարող են ուսուցչութիւն անել մեր դպրոցում, մանաւանդ այս տարի, երբ ուսումնարանը դրամական տագնապի առաջ է կանգնած, ուստի տեղական երիտասարդ-վարժապետներին կարելի է քիչ ռոճիկներով բաւականացնել, մանաւանդ որ նրանք ապրելու են իրանց ընտանիքում, առանց աւելորդ ծախսերի, որոնց պէտք կունենային դրսից հրաւիրված ուսուցիչները։ Ոչ մի կարծիք չունենք, որ տեղացի ուսուցիչները ամենայն ուրախութեամբ և զիջողաբար կը վերաբերվեն մեր աղքատիկ ուսումնարանին դէմ այս տարի, իսկ երբ ապագայում դպրոցի միջոցները կընդլայնանան,—այն ժամանակ այլ ևս խօսք չէ կարող լինել լաւ վարձատրութեան մասին։ Իսկ երբ նրանք անընդունակ կը լինեն իրանց ստանձնած մանկավարժական պաշտօնի մէջ և կը պահանջեն չափից դուրս վարձատրութիւն,—այն ժամանակ նրանց կասեն՝ «բարի ճանապարհ ձեզ»։

Առ այժմ այս հանգամանքը պէտք է ի նկատի ունենայ մեր նորընտիր հոգաբարձութիւնը։

Գ. Սինանեանց

ՆԱՄԱԿ ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻՑ

—

Սեպտեմբերի 14-ին

Տեղիս հայ հասարակութիւնը սպասողական դրութեան մէջ է իր դպրոցի վերաբերմամբ. առաջնորդի հրամանով հոգաբարձութիւնն ընտրված՝ պատրաստ է, սակայն կառավարութեան կողմից դեռ հրաման չը կայ դպրոցը վերադարձնելու։ Հայ երեխաները մնացել են առանց ուսումի և ուսուցիչները պարապ, որովհետև որոշված է դասաւանութիւն չը սկսել մինչև դպրոցների վերադարձնելը։ Չը գիտենք, մինչև երբ կը տևի այս դրութիւնը։ Ի՞նչն է դանդաղեցնում գործը։ Շատերը կարծում են, որ մի որ և է հանելուկ կայ ձրգձգման մէջ և ասում. «առնելը հեշտ է, իսկ տալը դժուար»։ Այդպէս է և առօրեայ կեանքում փողի հաշիւների մէջ։

Հետաքրքիր է, թէ ինչ դրութեան մէջ են մեր միւս հայ դպրոցները, թէկուզ հէնց Թիֆլիսինը։ Մեր լրագիրներն այդ մասին ոչինչ չեն գրում, չը նայելով, որ մեծ է ժողովրդի հետաքրքրութիւնն այդ կողմից, մանաւանդ գաւառներում և հեռաւոր վայրերում։ Վերցնում էք ձեռքդ լրագիրը, սակայն նրա մէջ բացակայում են տեղեկութիւններ այդ մասին։ Այն ինչ մեր բոլորի ուշադրութիւնն ուղղված է դէպի այն կողմը, թէ ինչ տեղեկութիւններ կը գան Թիֆլիսից դպրոցական հարցի վերաբերմամբ։ Միայն «Մշակում» կարդացինք դպրոցական յանձնաժողովի և ուսուցչական համագումարի (համաժողովի) որոշումները, իսկ դպրոցների վերաբացման մասին ոչ մի խօսք չը կայ։ Ժամանակն անցնում է, այն ինչ դպրոցների հարցն առկախ դրութեան մէջ է։ Ի՞նչպէս սկսել դասաւանութիւնը 1874 թ. ծրագրով, երբ դպրոցական շէնքերը չեն վերադարձնում։ Պէտք է շտապեցնել գործը յաճախակի դիմումներով ուր հարկն է և վերջ տալ այս սպասողական դրութեանը, որովհետև այդպիսով սառում է ժողովրդի ոգևորութիւնը, մարում եռանդը և հատնում հաւբերութիւնը։

Մի քանի խօսք նաև մեր դպրոցների կողմից լրագրներում տուած յայտարարութիւնների մասին։ Ցաւախ կարդում ես լրագրում այսպիսի յայտարարութիւն, որ տուել է մի որ և է երէցփոխ կամ քահանայ, այն էլ երբեմն նոյն իսկ միջնակարգ դպրոցաւարտ. «Հրաւիրվում է այս ինչ դպրոցի համար տարեկան այսքան ռոճիկով ուսուցիչ, որն անպատճառ աւարտած լինի Գէորգեան ճեմարանը, կամ Ներսիսեան դպրոցը»։ Շատ լաւ. հապա ի՞նչ անեն մեր միւս, օրինակ, Երևանի, Շուշու և Նոր-Նախիջևանի թեմական դպրոց աւարտողները։ Եթէ այդ դպրոցների տուած գիտութեան և ծրագրի միանմանութեան վրա վստահ չէք, հապա նրանց էլ ինչո՞ւ էք պահում, երբ նրանք ձեզ համար գոյութիւն չունեն, որպէս թեմական դպրոցներ։ Ուրեմն նրանք գոյութիւն ունեն միայն հայ երեխաներին դժբաղդացնելու համար։ Ասացէք, խընդրեմ. ի՞նչ անեն այդ դպրոցներն աւարտող դժբաղդ հայ աշակերտները։ Եթէ չէք հաւատում այդ դպրոցների տուած գիտութեան, այն ժամանակ դրէք նրանց իրանց բարձրութեան վրա։ Ինչով է մեղաւոր այն հայ աշակերտը, որը դժբաղդութիւն ունի այդ դպրոցներից մէկն ու մէկը աւարտելու, երբ նա ձեր կարծիքով իրաւունք չունի ուսուցչութիւն անելու։ Ինչպէս որ Ռուսաստանում ամեն տեղ գիմնազիան գիմնազիա է, այնպէս էլ մեր մէջ թեմական դպրոցը պէտք է լինի, անկախ այն հանգամանքից, թէ նա որտեղ է գտնվում։ Եւ զարմանալին այն է, որ մեզանում ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում այդ բանի վրա,—ոչ հոգևորականութիւնը, ոչ լրագրութիւնը, ոչ դպրոցական յանձնաժողովը և ոչ էլ այդ դպրոցներն աւարտողներից մէկն ու մէկը։ Դա ի՞նչ սխալ աշխարհայեացք է՝ խորութիւն դնել թեմական դպրոցաւարտների մէջ։ Ցաւենայն դէպս, մեր բոլոր թեմական դպրոցները միատեսակ ծրագրով են առաջնորդվում։ Արդեօք երբ պէտք է ազատվենք այդ տեսակ և նոյնպէս ռեկլամային բովանդակութիւն ունեցող յայտարարութիւններից։

Ե. Բաբայեան

ԿՈՎԿԱՍԸ ԵՒ ՄԱՄՈՒԼԸ

XII

Ռուսաց մամուլը կամենում է բազմակողմանի կերպով լուսաբանել Կովկասեան արիւնահեղ դէպքերը, որպէս զի կարողանայ անկողմնապահ դատողի դերը գրաւել։ «Русь» լրագիրը, ինչպէս գիտենք, արդէն առանձին բաժին է բաց արել իր էջերում և հրաւիրում է հայերին և Թուրքերին պարզել իրերի իսկական դրութիւնը։ «Слово» լրագիրն էլ, կամենալով կուռ կողմերի խօսքը լսել, տեղ է տալիս հայերի և Թուրքերի ցուցմունքներին։ «Հայերի մէջ» յօդուածում պատմված է այն խօսակցութիւնը, որ ունեցել է լրագրի աշխատակիցը Բագուից Պետերբուրգ գնացած հայերի հետ։

Դրանցից մէկը, երդուեալ հաւատարմատար և նաւթագործ Ա. Ասրիբէկեանը ասել է աշխատակցին.

«Դրութիւնը պարզելու համար պէտք է իմանալ Կովկասի պատմութիւնը ընդհանրապէս և հայ Թուրքական պատմութիւնը մասնաւորապէս։ Նախ և առաջ Թուրքերի մասին. Բոլոր Թուրք-Թաթարները դաւանում են իսլամը և մահմեդական կրօնի ոգով տածում են դէպի քրիստոնեայ ժողովուրդները անբարեացակամութեան և մինչև իսկ կրօնական ատելութեան բոլորովին որոշ զգացմունքներ։ Ռուսաստանը այս բանը շատ լաւ գիտէ իր փորձով, որովհետև նրա պատմական թշնամին—Թիւրքն է։

Ինչպէս որ առաջներում Թաթարների մէջ, մանաւանդ Վոլգայի ափերին բնակվողների մէջ, կար մեծ շարժում Թիւրքիայի հետ միանալու համար, և այդ շարժումը գործում էր «պանիսլամիզմի» դրօշակի տակ, այնպէս էլ այժմ գաղափարը մնացել է նախկինը, բայց միայն փոխել է մակագրութիւնը դրօշակի վրա։ Երևան եկաւ «պան-Թիւրքո-Թաթարիզմ» ինչպէս միացման և շարժման նշանաբան։ Էութիւնը մնաց մի և նոյնը։ Ցեղով քաղաքակրօնական ֆօնի վրա տեղի ունեցաւ սիւնիների և շիաների միացումը։ «Պան-Թիւրքո-Թաթարիզմը» միացրեց այդ երկու թշնամացող կողմերը, ապացուցանելով նրանց, թէ նրանք թէև դաւանում են երկու տարբեր դաւանանք, բայց և այդպէս՝ եղբայրներ են թէ ծագումով և թէ լեզուով։

Ամբողջ «պան-Թիւրքո-Թաթարիզմի» կենտրօնը Ռուսաստանի համար—Կովկասն է։ Այստեղ ծնվում է շարժումը և այստեղից տարածվում է բոլոր Թուրքական տեղերը։ Թուրքերի մէջ այս ուղղութեամբ գոյութիւն ունի այնպիսի մի միակամութիւն, որ դուք կարող էք հարցնել Ղազանի Թաթարին և նա կը պատասխանէ ճիշտ և ճիշտ այնպէս, ինչպէս Կովկասի Թուրքը։ Միջին Ասիայի Թուրքը մտքերի և նոյն իսկ այդ մտքերի ձևի կողմից մի է Ղրիմի Թաթարի հետ։ Այդ առանձին հաւաքական զգացմունքը և հաւաքական միտքը յատուկ են բացառապէս իսլամի հետևողներին։

«Ո՞րքան հետևողներ ունի «պան-Թիւրքո-Թաթարիզմի» դրօշակը։

«Ահա մի աչքի ընկնող մահմեդականի խօսքերը։

«—Մենք 150 միլիոն ենք Ալտայից մինչև Միջերկրական ծովը։ Իսկ դուք—հայերդ—մի բուռ էք։ Ոչ միայն հայերը, Ռուսաստանը և ամբողջ Եւրոպան պիտի իմանայ թէ ինչ ենք մենք։

«Եթէ ենթադրենք թէ վաղվուն մահմեդականը չափազանցրել է թիւը երկու, նոյն իսկ երեք անգամ—էլի «պան-Թիւրքո Թաթարիզմի» կուսակցութիւնը 50 միլիոն կունենայ անկասկած։

«Ինչպէս ասացի, այդ կուսակցութեան կենտրօնը Կովկասն է, իսկ այստեղ՝ Բագուի, Երևանի և Գանձակի նահանգներում յանձին բազմաթիւ, հարուստ բէկերի և հարուստ արդիւնագործ քաղաքացիների գտնվում են պան-Թիւրքո-Թաթարիզմի շարժման հովանաւորները։

—

«Խօսակցութիւնը—շարունակում է պատմողը—անցաւ ներկայ դրութեան—հայերի և Թուրքերի յարաբերութիւններին։ Առաջ եկաւ երկրորդ հայ հռետորը։

—Որպէս զի շատ պարզ որոշել ձեր առաջ Թուրքերի վերաբերմունքը դէպի հայերը, ես կը պատմեմ մի բան մեր ժողովներից։ Թուրք բէկը հարցնում է հայերին. «Ո՞վ բերեց ռուսներին Կովկաս։ Հայերը։ Ո՞վ էր օգնում ռուսներին Կովկասը նուաճելիս։ Հայերը։ Եթէ չը լինէին հայեր, այստեղ չէին լինի և ռուսներ, և Կովկասը մերը կը լինէր»։

«Այսպիսով, կովկասեան հայերը Թուրքերի աչքում նրանց թշնամիների, քրիստոնեաների առաջապահ զօրքն են։ Թշնամին հեռու մի տեղ է, իսկ առաջապահները քթի տակ են։ Նրանց էլ պէտք է ոչնչացնել ամենից առաջ։

«Բացի դրանից, հայերը Թուրքերից շատ կուլտուրական են և բնականաբար իրանց այս առաւելութեամբ սկսում են ճնշել իրանց հարևաններին։ Թուրքերը բոլորովին բացարձակ կերպով արտայայտում են այս բանը։

«—Դուք, հայերդ,—ասում է մահմեդական գործիչը ժողովների մէջ,—չափազանց շատ էք առաջ գնացել։ Պէտք է ձեզ կանգնեցնել։

«Բայց ինչպէս են այս խօսքը հասկանում Թուրքերը։ Նախ պէտք է արմատից կտրել անտեսական բարեկեցութիւնը—այս բանը փայլուն կերպով կատարված է այժմ Բագուում, ձկնորսարաններում և բոլոր երեք նահանգներում, իսկ յետոյ պէտք է մտնել ֆիզիկական անձնաւորութեան և բռնութեան, սպառնալիքների ու սպանութիւնների միջոցով ահաբեկել հայերին։

«Եւ այսպէս էլ լինում է...

«Յետոյ Թուրքերը շատ են իրանց սրտին մօտ առնում հայկական շարժումը Թիւրքիայում։

«—Եթէ դուք կարող էք մեզ դէմ գնալ Թիւրքիայում,—ասում են Թուրքերը,—մենք էլ կարող ենք ձեզ դէմ գնալ Կովկասում։

«Որովհետև Թիւրքիան նրանք համարում են իրանց հարազատ երկիր, իսկ Թիւրքերին—եղբայրներ։

«Եւ այս հարցում Թուրքերը դեռ էլ հեռու են գնում։ Նրանք ասում են. դուք, հայերդ, ձեր գործողութիւններով Թիւրքիայում առաջ կը բերէք պետութիւնների միջամտութիւն, և այն ժամանակ Թիւրքիան վաղ թէ ուշ բաժան-բաժան կը լինի։ Իսկ սա մեր կործանումն է։

«Եւ վերջապէս, վերջին կաթիլը, որ լցրեց Թուրքերի համբերութեան բաժակը, հայերին իրանց եկեղեցական կալուածները վերադարձնելն էր։

«Հայերը հրճվում էին, չը Թաքնվելով և սա սաստիկ կատաղեցրեց Թուրքերին։ Հայերին տուած այդ արտօնութիւնը Թուրքերի սաստիկ նախանձը գրգռեց։

«Այսպէս ահա, եղբակցութիւններ հանելով բոլոր ասածից, կարելի է որոշակի ասել, որ Թուրքերի ատելութիւնը դէպի հայերը ունի հին և յուսալի հող։

—

«—Բայց ինչպէս են իրանք, հայերը։

«Խօսակցութիւնը փոխվեց, և խօսքը էլի առաջին հռետորին ընկաւ։

«—Հայերը... Ամենից առաջ ես պիտի ասեմ, որ հայերը շատ լոյալ ազգ են Ռուսաստանի և ռուս կառավարութեան վերաբերմամբ։ Ոչ մի հայ չէ մտածում ինքնավարութեան մասին հէնց միայն այն պատճառով, որ շատ լաւ գիտէ թէ փոքր ազգութիւնների ինքնավարութիւնը այժմ—ուտոպիա է։ Յետոյ, Ռուսաստանից բաժանման մասին խօսք անգամ չէ կարող լինել։ Թիւրքաց հայերի կեանքը մեր աչքերի առջև է—տասնապատիկ լաւ ենք ապրում մենք ռուսաց տիրապետութեան տակ։ Որքան էլ սահմանափակումներ լինեն—համեմատութիւն անգամ չէ կարելի բերել։

«Ինչ-որ պատճառով ռուսաց կառավարութիւնը մեզ համարում է յեղափոխականներ։ Համառուսական յեղափոխական շարժման մէջ հայերը մասնակցում են այնքան, որքան և ռուսները, մալոռոսները, ֆինները, հրէաները։ մեր կոմիտեները—օգնութիւն են Թիւրքահայերին. ինչ վերաբերում է կոմիտեների գործունէութեան Ռուսաստանում, դա վերջին տարիներս առաջ քաշողները մենք չէինք։ Եւ այժմեան ժամանակ նա վերջացել է։

Այս հայեացքն ունի հայոց կուլտուրական դասակարգը։ Ինչ վերաբերվում է հասարակ ժողովրդին, այժմ էլ հայկական խնջոյքներում առաջին բաժակը աւանդութեամբ բարձրացվում է «Սպիտակ Ցարի» կենացը։

«Առհասարակ, սկզբունքով ես անկեղծ ողջունում եմ այն շարժումը, որի նպատակն է գիտակցութիւն առաջացնել Թուրքերի մէջ, որովհետև ես միանգամայն խորթ եմ ամեն տեսակ ազգայնական թշնամութեան։ Ես նոյն իսկ հեռաւոր ազգականներ ունեմ Թուրքերից, բայց ես բոլորովին չեմ կարող հաշտվել այն ձևի հետ, որ ընդունում է այդ շարժումը Թուրքերի մէջ։ Ես շատ եմ ասել մեր խաղաղարար ժողովներում, թէ ամեն մի կուլտուրական մրցակցութիւն պիտի գնայ կուլտուրական ճանապարհով և ոչ թէ ազգութեան և բռնութեան ճանապարհով։

«Անցնելով այժմ ամենագլխաւորին—ռուսաց կառավարութեան վերաբերմունքին դէպի հայերը, ես չեմ կարող չարտայայտել իմ ծայրագոյն զարմանքը։

«Ռուսաց կառավարութեան քաղաքականութիւնը Կովկասում բոլորովին այն ճանապարհով չէ ընթանում, որով պիտի գնար։ Եթէ այդ քաղաքականութեան հիմնաքարը կազմում է ազգութիւնների հարցը (այս քաղաքականութեան ես չեմ համակրում), չէ՞ որ պէտք էր իմանալ, որ Թուրքերը, որոնց այժմ այնպէս շոյում են, նայում են Ռուսաստանին, կամ, աւելի ճիշտ ասած, նայել են մինչև այժմ, ինչպէս մի ահաւոր ոյժի։ Սա Արևելքի սովորական բարոյագիտութիւնն է։ Այժմ, երբ պատերազմը կոտրել է Ռուսաստանի զինուորական հեղինակութիւնը, մահմեդականները կորցրել են իրանց վերջին զգացմունքը դէպի Ռուսաստանը, այն է երկիւղը։ Ռուսը այլ ևս սարսափելի չէ։ Ինչի՞ կը հասցնէ այս։

«Ինչ վերաբերվում է հայերին, մնալով նախկին յենակէտի վրա, պէտք է ընդունել, որ յանձին նրանց Ռուսաստանը ունի անհամեմատ աւելի յուսալի յենարան նախ և առաջ այն պատճառով, որ հայերը արագ են կուլտուրական դառնում։ Պետութեան ծայրերում կուլտուրական տարրը անհրաժեշտ է և, ի հարկէ, աւելի շատ վստահելի է ընդհանուր պետական ապահովութեան տեսակէտից, քան կիսավայրենի ցեղերը, որոնց համար միացման գաղափարը տիրողի սուինների քանակութեան մէջ է։

«Ռուսաց կառավարութիւնը պիտի հաւատ ունենայ դէպի հայ ժողովուրդը, և այն ժամանակ նա կարող է հանգիստ յենվել նրա վրա իր քաղաքականութեան մէջ, իբրև մի կուլտուրական և խաղաղ տարրի վրա... Իսկ ընդհանրապէս, ռուսաց քաղաքականութիւնը Կովկասում պիտի ազգայնական հարցերից դուրս լինի։ Սա գլխաւորն է»։

—

Այս յօդուածին հետևում է մի ուրիշը, «Audiator et altera pars» (Լսենք և միւս կողմը) վերնագրով։ Այդտեղ ոմն Արդօվ, Թուրքերին պաշտպանելու համար, բերում է... «Հէյաթ» լրագրի մի յօդուածի թարգմանութիւնը և խոստանում է ծանօթացնել ուրիշ յօդուածների հետ էլ։ Դա իսկ որ հետաքրքրական է։ Եւ մենք կը տեսնենք թէ պ. Արդօվ որքան բարեխղճութիւն ցոյց կը տայ։ «Հէյաթի» մէջ ամեն տեսակ բան կարելի է գտնել—և ֆանատիկոսական ատելութեամբ բորբոքված կոչեր, և՛ կեղծաւոր եղբայրասիրութեան սուտ հառաչանքներ։ Տեսնենք ռուս լրագրի աշխատակիցը ինչպէս պիտի կատարէ իր պարտքը—պիտի «ջոկովի՞» անէ, թէ անաչառութեամբ մէկից էլ, միւսից էլ նմուշներ պիտի բերէ...

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Թիֆլիս, սեպտեմբերի 20-ին

Կոչ հայ հասարակութեան

Սարսափելի աղէտը, որ այնքան անակնկալ կերպով պայթեց նախ Բագուի, յետոյ Երևանեան նահանգի՝ գլխաւորապէս Նախիջևանի և շրջակայ գաւառների, ապա Շուշի քաղաքի և գաւառի հայ ազգաբնակութեան գլխին. սրածութիւն, հրդեհ, աւերումն, որոնց ենթարկվեցին բազմաթիւ հայ գիւղեր մի այնպիսի ըսպէտում, երբ հայ գիւղացին, արդէն սպառած ունենալով իր պաշարները, պատրաստվում էր նոր հունձի. սարսափելի քայքայում, անկում բարոյական, նիւթական, տնտեսական, որ սպառնում է հազարաւոր ընտանիքների, որոնք այսօր լքված, աւերված, սարսափած, մատնված են դառն և սոսկալի դժբախտութեան—նուիրական պարտք են դնում Ամենայն Հայոց վեհափառ Կաթողիկոսից հաստատված յանձնաժողովի վրա դիմել հայ հասարակութեան և յանուն մարդկային նուիրական շահերի, յանուն տառապեալ ժողովրդի հայցել անմիջական օգնութեան ձեռք կարկառել և ուղարկել սրտաբուխ ու առատ դրամական նուէրներ, որոնցով յանձնաժողովս կարողանայ ամոքել ծովացած վշտերը, սրբել դառն արտասուքները և մի փոքր մխիթարել վհատած տառապեալ ժողովրդին ու սպեղանի դնել նրա դժնդակ վէրքերին։

Յանձնաժողովս մեծ հաւատ ունի, որ ինչպէս Բագուի աղէտի ժամանակ հայ հասարակութիւնը փութաց օգնել նրան իր առատ նուէրներով, այժմ, երբ աղէտի ծաւալը աւելի մեծ է և համաճարակ, այդ օգնութիւնը առատօրէն կը թափվի։

Բոլոր նուէրները կարելի է ուղղել յանձնաժողովի գանձապահ պ. Ա. Մելիք-Ազարեանի անունով—(Уголъ Сергіевской и Лермонтовской улицъ. д. собвтв.)։

Սրա հետ միասին յանձնաժողովը պարտք է համարում մի համառօտ հաշիւ ներկայացնել հայ հասարակութեան իր գործունէութեան մասին, սկսել փետրվ. 10-ից մինչև այսօր։

Նախ. Յանձնաժողովի Դ. Արքեպիսկոպոս
Անդամ-քարտուղար Հ. Առաքելեան

II

Թիֆլիս, սեպտեմբերի 21-ին

«Մշակի» երեկվայ համարում (№ 190) տպված պ. Ա.—Դօի «Օգնութեան գործը» նամակը առիթ է տալիս ինձ ասել հետևեալը։ Ինչո՞ւ է փորձ անվում գործել առանձնապէս, անհատապէս, ինչո՞ւ չեն կամենում զօրավիգն և նեցուկ լինել արդէն գոյութիւն ունեցող, կազմակերպված հաստատութեան։ Ամենքին յայտնի է, որ հէնց փետրվարի սկզբում, երբ առաջին անգամ պայթեց հայկական աղէտը Բագուում, Թիֆլիսի հայ ինտելիգենտ հասարակութիւնը շտապեց կազմել մի նպատակաւոր յանձնաժողով, որ հաստատվեց և վեհ. կաթողիկոսի կոնդակով, Թիֆլիսի առաջնորդի նախագահութեամբ, յատկապէս աղէտի զոհերին օգնելու, նիւթական և բարոյական աջակցութիւն ցոյց տալու համար։ Բագուի աղէտից յետոյ, այդ յանձնաժողովը սկսեց օգնել Նախիջևանի, Երևանի և ապա Շուշի գաւառներում աղէտի ենթարկված հայերին։ Նա հասցրեց նրանց դրամական օգնութիւն. կազմակերպեց սանիտարական, բժշկական, փաստաբանական օգնութիւն. նա հաստատեց Ալէքսանդրօպոլում, Նախիջևանում, Երևանում տեղական մասնաժողովներ յաջորդների միջոցով. նա ուղարկեց ալիւր, ուտելիք, կահ կարասիք, տնային, երկրագործական գործիքներ, զգեստներ. վերջապէս, այդ յանձնաժողովը իր հաշուով և ծախքով ուղարկեց գիւղատնտես Ա. Սահակեանին Նախիջևանի գաւառը, ուսումնասիրելու գիւղացիների տնտեսական վիճակը և նրա ուսումնասիրութեան ու զեկուցման հիման վրա յանձնաժողովը յատկացրեց 10 000 ռուբլի լծկան տաւար և գինու կարասներ գնելու։

Յանձնաժողովը, ինչպէս կարելի է տեսնել նրա տուած հաշուից, 7—8 ամսվայ ընթացքում ստացել է մօտ 80,000 ր. և ծախսել։

Ինչով ուրեմն բացատրել, որ իմանալով հանդերձ այդ կենտրօնական յանձնաժողովի գոյութիւնը, իմանալով որ Նախիջևանում ևս գործում է մի յատուկ տեղական մասնաժողով, Մեսրոպ և Թօմա վարդապետների աջակցութեամբ, մարդիկ, դիմում են մասնաւոր անձանց որ յանձն առնեն ստանալ գումարներ և գործադրել վնասվածների օգտին։ Եւ պ. Ա.—Դօն ևս այդ հիման վրա հարկաւոր է համարում առաջարկել կազմել մի նոր մարմին, որ ունենայ ճիւղեր Նախիջևան, Երևան և Թիֆլիս քաղաքերում և կարողանայ օգնութիւն հասցնել կարօտեալներին։

Միանգամայն չեմ կարող բացատրել ինչի՞ համար պէտք է ստեղծել մի նոր մարմին, բանի որ արդէն 8 ամսից ի վեր գոյութիւն ունի և գործում է մի յանձնաժողով, որ սկսել է վայելել ժողովուրդի համակրութիւնը և աջակցութիւնը և իր ստացած գումարների չափով օգնութեան է հասնում ամեն տեղ, ուր հնարաւոր է։

Ի՞նչ միտք կայ ստեղծել մի նոր մարմին, որ ծանօթ չէ գործերին, կարիքներին։ Ա.-դօն ասում է՝ «Իսկ եթէ չը լիներ գիւղատնտես Սահակեանը»։ Չէ՞ որ այդ Սահակեանին ուղարկել է այն յանձնաժողովը, որը ունի, յամենայն դէպս, կարիքների և օգնութեան գործի ծրագիր, որովհետև նա է տուել ծրագիրը Սահակեանին, բայց ամբողջապէս և հիմնովին այդ ծրագիրը գործադրել կարող էր, եթէ գումար ունեցողները փոխանակ պատահական մարդիկ որոնելու, ունեցած գումարները տային այդ յանձնաժողովին։

Օգնենք արդէն գործող մարմնին և մեր անջատ բաժան գործողութեամբ չը չլատենք նրա ոյժերը։

Հ. Առաքելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1½ թերթից։

—

«Մշակ»-ի երեկվայ համարից մեր ընթերցողներին արդէն յայտնի է Բագուում, Բազարնի փողոցում երկու Թուրքերի հայերի ձեռքով վիրաւորված լինելու պատմութիւնը։ Գործն արդէն քննվում է. կան ականատեսվկաներ։ Բայց ահա թէ ինչ ենք կարդում նոյն փաստի առիթով «Кавказъ» լրագրում. «Բագուի նահանգապետը (Լիլեվ) հեռագրում է սեպտեմբերի 17-ին. «Զը նայելով այս ամսի 14-ին հանդիսաւոր կերպով յայտարարված հաշտութեանը, 16-ին, կէս օրից յետոյ, երկու հայ տարբանակի հարուածներով փորձեցին սպանել Բազարնի փողոցով անցնող երկու մահմեդականների, բայց չաջողելով այդ բանում, վիրաւորեցին նրանցից մէկին բէբուտով։ Ցանցաւորներին բռնեցին վրա հասած երկու կողակներ. իսկ մի հայ մնից կրակ արին երրորդ կօզակի վրա, որը շտապում էր ազատվելի տեղը։ Կրակ անող հային, կօզակի ցուցումով, մի քիչ յետոյ ձերբակալեցին ոստիկանատան մօտ։ Ձերբակալված է մի բանւոր ռուսը ձեռքին։

—

«Баку» լրագրում կարդում ենք հետևեալ «Նամակ խմբագրութեանը». «Մեծ. պարոն խմբագիր։—«Каспій» լրագրի № 181-ում ներեցած լուրն այն մասին, որ ես կրակ եմ արել թէ կօղակի և թէ Հաջի-Բաբա Աշուրովի վրա իմ ընակարանի լուսամուտից, դիտաւորեալ, հնարած և չարախիտ սուտ է։ Դատաստանական քննութիւնը բաց կանէ ճշմարտութիւնը»։—Բազուի II քաղաքամասի դատարանի դատաստանական պրիստաւ Արումով։—Աւելորդ չենք համարում աւելացնել, որ «Баку» լրագրի № 124-ում առաջ է բերված պ. Արումովի գործի ամբողջ պատմութիւնը և ժանրամասն ու փաստային հերքում է գրված «Каспій»-ում առաջ բերված այդ պաշտօնական ստութեանը։ Պէտք է ասել, որ «Баку»-ի նկարագրածը և մեր թղթակցի հաղորդածը բոլորովին իրար նման են։

—

Վրաստանի էկզարխի կարգադրութիւնով Թիֆլիսի պրաւօսլաւնի սեմինարիայի սաներին արձակել են դպրոցից մինչև նոր տեսութիւն։ Ինչպէս յայտնի է, այդ աշակերտները սեմինարիայի վարչութեանը ներկայացրել են որոշ պահանջներ, առանց որոնց կատարման չեն ուզում դպրոց այցելել։

—

Պետերբուրգ քաղաքն իր համար անհրաժեշտ նաւթի առիթով աճուրդ էր նշանակել սեպտեմբերի կէսերին։ Աճուրդին մասնակցել է միայն Նոբելի ֆիրման, որը միւս տարիների մատակարարութեան գնից ուղիղ 50% աւելի է պահանջել։

—

Դանձակի նահանգական վարչութիւնը Կովկասի Փոխարքային է ներկայացրել յատուկ խորհրդակցութեան արձանագրութեան պատճէնը։ Այդ խորհրդակցութիւնը դումարված է եղել քննելու Դանձակի թուրք դպրոցների վիճակը։ Խորհրդակցութիւնը կարծիք է յայտնել, որ Շահ-Աբբասի մեծ մզկիթի ըակում գտնվող ռուս-թուրքական դպրոցը պէտք է փակել և նրա փոխարէն բաց անել մի «մէդրէսէ», մոլլաներ և ախունդներ պատրաստելու համար, իսկ դպրոցների ծախքերը պէտք է հոգալ վակֆների (մզկիթների կայքերի) յանձնաժողովի հաշուով։

—

Կովկասի բէալական դպրոցներն առաջադիմում են։ Այն ժամանակ երբ բոլոր քաղաքակիրթ երկրներում աշխատում անքում են ուսումը եթէ ոչ ձրի դարձնել, գոնէ նուազեցնել ուսման վարձը որքան հնարաւոր է, նոյն ժամանակում Դերբէնդում բէալական դպրոցը ուսման տարեկան վճարը ուղիղ կրկնապատկում է՝—20 ռուբլուց դարձնում է 40 ռուբլի, իսկ Թիֆլիսի բէալական դպրոցի ուսման վճարը 65 ռուբլուց դարձնում են 70 ռուբլի։—Մեծ առաջադիմութիւն։ այդ դպրոցների դռները քանի գնում աւելի են լայնանում հարուստների համար, իսկ աղքատների համար օր աւուր աւելի անմատչելի է դառնում նրանց մուտքը։

—

Իշխան Ա. Ռ. Ծերէթելին խնդրամատոյց է եղել Կովկասի Փոխարքային, որ իրան թոյլատրվի Թիֆլիսում նախնական ցենզուրայի թոյլատուութեամբ հրատարակել մի վրացերէն պատկերազարդ ծաղրական թերթ «Նուամբա» («Իւմօրիստ») անունով։

—

Պետերբուրգի բարձր պաշտօնական շրջաններում նորից յամառ լուրեր են պատում, որ արտաքին գործերի մինիստր Կոմս Լամզդորֆը և մինիստրի օգնական իշխան Օբոլենսկին մօտ ժամանակներս թողնում են իրանց մինիստրական պաշտօնները և նշանակվում են Պետական Խորհրդի անդամ։

—

Պաշտօնապէս հաղորդված է Վարշավայի լրագիրներում, որ մինչև սեպտեմբերի 15-ը Վարշաւայում եղել է ասիական խոլերայի 3 դէպք։ Պետրօկովի նահանգապետի զեկուցման համաձայն, Պետրօկովում եղել է խոլերայի 1 դէպք։

—

Այսօր 20-ին, երեկոյեան ժամի 8-ին Թիֆլիսի Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում, 68 մեշչան պատգամաւորների ներկայութեամբ տեղի ունեցան մեշչանների աւագի և երկու անդամների ընտրութիւնը որբերի դատարանի համար։ Ձայների մեծամասնութեամբ և միաձայն, աւագ ընտրվեց ներկայումս մեշչանների աւագի պաշտօնակատար Ստեփան Դանդուրեան, իսկ որբերի դատարանի անդամներ պ.պ. Նիկ. Նարիմանեան և Անդրէյ Աղամիձէ։ Երկուսն էլ փորձված և գործերի ծանօթ անձինք են, ժանաւանդ, որ երկուսն էլ բաւական ժամանակ եղել են նոյն դատարանի անդամներ։ Սրանց վրա կան շատ բարոյական մեծ պարտականութիւններ որբերի գոյքի և կարիքների մասին հոգալու։

—

Մօտ օրերս, ասում է Р. Сл. լրագիրը, զինուորական-բժշկական ակադէմիայի պրոֆէսորների խորհուրդը որոշեց խնդրել զինուորական մինիստրութեանը, որ ինքնավարութիւն մտցվի և իրանց աէադէմիայում։ Սեպտեմբերի 16 ին զինուորական մինիստրը պատասխանել է, որ ինքնավարութիւն մտցնել ակադէմիայում անկարելի է՝ քան դեռ նա գտնվում է զինուորական վարչութեան իրաւասութեան տակ. բայց եթէ նա անցնի քաղաքացիական վարչութեան ձեռք,—մի բան որին զինուորական մինիստրութիւնը դէմ չէ,—այն ժամանակ ինքնավարութիւն մտցնելը ճիշտ խնդիր է։ Պատասխանն ստանալուն պէս՝ ակադէմիայի խորհուրդը նիստ արեց և ընտրեց մի յանձնաժողով, որը պէտք է մշակէ կանոններ, թէ ինչպէս ակադէմիան դառնայ Պետերբուրգի համալսարանի մի մասը։

—

Թիֆլիսի նպաստամատոյց յանձնաժողովը ուղարկել է Շուշի, ջնջված հայերին օգնելու համար 5000 ռուբլի։

—

«Արշալոյս» լրագրի երէկվայ համարում մենք հանդիպեցինք մի վերին աստիճանի ցաւալի բանի։ Նուիրուց գրած մի թղթակցութեան մէջ գործ է ածված «շուն թուրքեր» փողոցային, անպատկառ դարձուածքը։ Մենք մի ըռչէ անգամ չենք կասկածում, որ այդ խօսքերը մացել են լրագրի մէջ պատահաբար, ոչ դիտմամբ, այլ պարզապէս այն պատճառով, որ նրանք աչքի չեն ընկել, չեն նկատվել, մի բան, որ հեշտ պատահում է լրագրական շտապ աշխատութեան ժամանակ։ Բայց չենք կարող չը ցանկալ, որ խմբագրութիւնը առհասարակ մեծ զգուշութեամբ վերաբերվի իր հրատարակած նիւթերին։ Չենք խօսում այն մասին, թէ որքան մի այդպիսի սխալ ասելը, թէ ինչ կարող է թիւրիմացութեան, աւելորդ գրգռման շարժառիթ դառնալ։ Անկախ այդ հանգամանքից էլ, կոպիտ հայհոյական խօսքեր որ և է ազդութեան կամ անհատի հասցէին տեղ չը պիտի ունենան մամուլի մէջ։ Սա մի շատ տարրական ճշմարտութիւն է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թուրքիա։—Պարիզից հեռագրում են մայրաքաղաքի լրագիրներին, որ այնտեղի երիտասարդ թուրք շրջաններում յամառ լուրեր են պատում, որ սուլթան Աբդուլ-Համիդը վերջին ժամանակներս յաճախ ընկնում է զօրեղ մէլանխոլիայի մէջ։ Այդպիսի բոլէներում նա չէ ճանաչում նոյն իսկ իր մտերիմներին։

—Ինչպէս հաղորդում է «Politische Korrespondenz»-ը, բժշկութեան ուսանող Արշակ Ղազարոսեանը, որ բանտարկված էր Կ. Պոլսի կենտրօնական բանդում, սեպտեմբերի 7-ին գտնվեց պարանով խեղդված։ Նրա դիակը տրվել է հայոց պատրիարքարանին։ Ոստիկանութիւնը պնդում է, որ Արշակ Ղազարոսեանն անձնասպան է եղել։ Լուրերը են պատում, որ կենտրօնական և Բէշիկթաշի բանտերում ձերբակալված հայերը ենթարկվում են տանջանքի։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

20 սեպտեմբերի

ՕԴԷՍՍԱ։ 19 սեպտեմբերի։ Ֆակուլտէտները բացասական վճիռ կայացրին պայմանական փոխադրութեան հարցի մասին։ Ուսանողներին թողնում են մի և նոյն կուրսում, և ուսումնական տարին բաժանվում է երեք սեմէստրի։

ՊԱՐԻԶ, 20 սեպտեմբերի։ «Ժուրնալ դը Դէբա» խօսելով Ռուսաստանի վերաբերմունքի մասին դէպի անգլո-եապօնական դաշնագիրը, այն համոզմունքն է յայտնում, որ դաշնագիրը ստորագրող երկու պետութիւնների միջև պէտք է անպատճառ ստանութիւն առաջանայ, նրանց անխուսափելի մրցման պատճառով Ա. բևելքում ամտեսական հողի վրա։ Դաշնակցութիւնը իրաւէս կը մեռնի այն ժամանակամիջոցում, երբ պաշտօնապէս կենդանի կը համարվի։ Այդ ժամանակամիջոցից Ռուսաստանը օգուտ կը քաղէ իր ռազմական ոյժերը Ասիայում վերակազմելու և լրացնելու համար։

ՕՏԱՎԱ, 20 սեպտեմբերի։ Միլիցիայի մինիստրը Կանադայում միջնորդում է բրիտանական զինուորական մինիստրութեան առաջ, որ մի օֆիցէր նշանակվի արքայական թնդանօթաձիգ զօրքը ղեկավարելու համար։ Միլիցիայի դեպարտամենտը գտնում է 125 հէկտար հող Պէտէվանում, Օնտարիօում, զինուորական վարժութիւնների համար մշտական բանակատեղի լինելու նպատակով։

Կ. ՊՕԼԻՍ, 10 սեպտեմբերի։ Կ. Պոլսի մեծ-բրիտանական դեսպանը հեռանում է արձակուրդով, ի նշան դժգոհութեան սուլթանի գործունէութեան եղանակի դէմ, որը մերժեց բաւարարութիւն տալ Անգլիայի պահանջներին Զմիւռնիա-Այդինեան երկաթուղին շրջանակելու վերաբերմամբ։ Հաւատացնում են, որ սուլթանը մերժեց Անգլիայի միջնորդութիւնը Վիլհելմ կայսրի խորհրդով։

Կ. ՊՕԼԻՍ, 20 սեպտեմբերի։ Այստեղի ոստիկանութիւնը ամեն օր բաց է անում նոր դաւադրութիւններ, որոնք նպատակ ունեն օդը թռցնել գլխաւոր շինութիւնները։ Բազմաթիւ կալանաւորութիւններ շարունակվում են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օրէնքների ժողովածուի մէջ տպված է, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեան տակ գտնվող բարձրագոյն դպրոցների վարչութեան մասին ժամանակաւոր կանոնները տարածվում են և այն բարձրագոյն դպրոցների վրա, որոնք գտնվում են ֆինանսների, ներքին գործերի և հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնների և երկրագործութեան գլխաւոր վարչութեան իրաւասութեան ներքոյ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Լրագրական տեղեկութիւնների համեմատ, մինիստրների կաբինէտի հարցը Սօլսկու խորհրդակցութեան մէջ կը քննվի Վիտտէի վերադառնալուց յետոյ։ Արտաստահմանեան լրագիրների տեղեկութեան համեմատ, Եասսա ժամանեց քահանան «Պատեմկին» զրահակրից՝ հանդիպելու համար Ռուսինայում մնացած նաւաստիներին Ռուսաստան վերադառնալ։

ՕԴԷՍՍԱ, 20 սեպտեմբերի։ Պոլտավա գնաց արտակարգ գնացքը գեներալ Կոնդրատենկոյի նշխարներով, որին ուղեկցում են այրին, որդին, եղբայրը և պօրտ-արտուրցի օֆիցէրների պատգամաւորութիւնը՝ գլուխ ունենալով Նադէինին։—Դուման որոշեց անուանել Պոլիցէյսկայա փողոցը և հրապարակը գեներալ Կոնդրատենկոի անունով և հրապարակի վրա եղած սկվէրում դնել նրա կիսաբձանը։

ՎԻԵՆՆԱ, 20 սեպտեմբերի։ Բոլոր նշաններից երևում է, որ կայսրը կը հաճաձայնվի մացնել Ունգարիայում ընդհանուր ուղղակի ընտրողական իրաւունքը։ Որպէս հաղորդում են Բուխարէստից «Նօեյ-Ֆրէյ-Պրէսս» լրագրին, բուսինական կառավարութիւնը կուղարկէ պետութիւններին մի յայտագիր, որի մէջ կը յայտնէ, որ յունական յայտագրի մէջ պարունակվող գանգատները չեն հաճապատասխանում իրականութեան։ Բուխարէստ մատնացոյց կանէ յունական օֆիցէրների, հիւպատոսների և եպիսկոպոսների գործունէութեան վրա Մակեդոնիայում, որոնք յաճախ գործում էին խաղաղ կուսօվալախների դէմ, ձեռք ձեռքի տուած յոյն աւազակախմբերի հետ։

ԼՕՆԴՕՆ, 19 սեպտեմբերի։ «Տայմս» անգլո-ռուսական հաճաձայնութեանը նուիրած իր առաջնորդող յօդուածում ասում է, որ հաճաձայնութիւնը Ռուսաստանի և Անգլիայի միջև այն հարցերի մասին, որոնք վերաբերում են ասիական կալուածքներին, խոհեմ մարդկանց կողմից չէ կարող ընդունվել որպէս սպառնալիք Գերմանիային. որովհետև այդ հարցերը իրանց բնաւորութեամբ չեն հետաքրքրում ոչ մի ուրիշ եւրոպական պետութեան, բացի Ռուսաստանից և Անգլիայից։ Հաճաձայնութեան հասնելու համար անհրաժեշտ միակ պայմանը երկու կողմերի դիտաւորութիւնների շիտակութիւնն է ու բարի կամքը։ Երկու կողմերի նպատակն է ըստ կարելոյն միջոցներ գտնել առաջն առնելու և լուծելու այդպիսի դժուարութիւնները։ Անգլիան այդ մտքով զրաւական տուեց Ռուսաստանին այն դիրքով, որ նա բռնեց Պարսկաստանում պատերազմի ժամանակ, հեռու պահելով իրան յարձակողական քաղաքականութիւնից այդ երկրում, չը ցանկալով արդարութեան վրա չը հիմնված շահեր ստանալ։

ՎԱՐՇԱՎԱ, 20 սեպտեմբեր։ Լրագիրների մէջ երևցած լուրը՝ հաճաարանում զրաղմունքները սկսելու յետաձգման մասին, խոլերայի պատճառով, զուրկ է հիմքից։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ, Պօստային գրասենեակում յափշտակել են 115,000 ռուբլի։

ԿԱԶԱՆ, Հաճաարանի ռեկտորը խնդրագիրներ է ստանում բէալիստներից՝ իրաւագիտական և բժշկական ֆակուլտետները մտնելու համար։ Ռեկտորը յայտնեց այն կարծիքը, որ պէտք է յարգել այդ միջնորդութիւնը, եթէ մինիստրութեան կողմից արգելք չը լինի։

21 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն բէսկրիպտ Խիվայի խանի անունով. «Ձերդ Գայծառափայլութիւն. Ի նկատի ունենալով ձեր անփոփոխ անկեղծ անձնուիրութիւնը Ռուսաստանին, ձեր ժողովրդի կառավարութեան աշխատութեան վերաբերմամբ, յօգուտ նրա, և համաձայն կայսրութեան շահերին, ի նշան իմ առանձին բարեացակամութեան դէպի ձեր պայծառափայլութիւնը ուղարկում եմ ձեզ Իմ կենդանագիրը, ընդելուզված ադամանդներով, կրծքի վրա կրելու համար։ Մնամ ձեզ անփոփոխ բարեացակամ և անկեղծ բարեհաճ»։ Իսկականի վրա Նորին Մեծութեան սեփական ձեռքով գրված է. «ՆԻԿՕԼԱՅ»։

Ամառային արձակուրդից յետոյ կայացած մինիստրների կոմիտէի առաջին նիստը Վիտտէի նախագահութեամբ որոշեց թոյլ տալ Վարշավայի առևտրական դպրոցում ուսումն գերմանական լեզուով։ Պետերբուրգի դումայի մասնաւոր ժողովում ենթադրութիւն յայտնվեց մատուցանել Վիտտէին Պետերբուրգի պատուաւոր քաղաքացու կոչումը։

Կօբէկոյի խորհրդակցութիւնը սկսեց կատարածել իր դրած նպատակը—մամուլի մասին նոր կանոնադրութեան ծրագրի կազմումը։ Կօբէկոյի մասնաժողովում քննվում էր այսօրվայ նիստում ռուսաց պարբերական մամուլի համար առաջ մշակված կանոնների տարածումը և այլազգեաց մամուլի վրա։ Ժողովին հրավիրված էին ներկայացուցիչներ լեհական, հրէական և լատիշ լրագիրների։

ԻՐԻՒԵՎ։ Ընդհանուր ուսանողական ժողովը, 1093 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 156-ի որոշեց սկսել զբաղմունքները։

ՊԱՐԻԶ, 20 սեպտեմբերի։ «Ժուրնալ»-ը մեկնաբանելով մի քանի գերմանական լրագիրների առաջարկը՝ ստեղծել հակակշիռ անգլո-եապօնական դաշնագրին, ցոյց է տալիս հակակշիռների թէօրիայի խարուսիկ լինելը, որ տալիս է միայն աներևոյթային ապահովութիւն և ասում է, որ այդպիսի առաջարկները շահադիտական բնաւորութիւն են կրում—«Ֆիգարօ»-ն ասում է, թէ երեքպետեան դաշնակցութիւնը Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ յետ կը տանէր Ֆրանսիան տասն տարով։ Այդ դաշնակցութիւնը մեռածին կը լինէր։—«Պատրի»-ն տեղեկութիւններ է տալիս այն գլխաւոր հարցերի մասին, որոնք պէտք է քննվեն Հաագեան երկրորդ կոնֆերենցիայում, այն է զօրքերի թիւի կրճատումը. մասնաւոր սեփականութեան անձեռնմխելիութիւնը պատերազմի ժամանակ, նաւատորմերի կողմից նաւահանգիստների և գիւղերի ռմբակոծումը։—Հաագայի կոնֆերենցիան կը դումարվի 1906 թիւ օգոստոսից ոչ առաջ։

ԲԱԳՈՒ։ Ժամանակաւոր զինուորական ատեանը դատապարտեց մահվան պատժի կախաղանի միջոցով Միխայիլ Գուրջիձէին, որ մեղադրվում էր օկտօմբրիստական Իշխան Միքելաձէի սպանութեան մէջ։

ՏՕԿԻՕ, 21 սեպտեմբերի։ Եապօնական մամուլը համարում է, որ Գերմանիան թշնամաբար է վերաբերվում անգլո-եապօնական դաշնակցութեան և աշխատում է ստեղծել նրան հակակշիռ, կօալիցիայի ձևով։ Եապօնացիները ենթադրում են սակայն, որ այդ կօմբինացիան չի աջողվի, որովհետև Ֆրանսիան արամադիր չէ մասնակցել դրան։

ՄԱԴՐԻԴ։ Սպանիական անարխիստները կամենում են ցոյց անել Լուբէի դէմ նրա Սպանիայում ճանապարհորդութիւն կատարած ժամանակ։

ՀՌՕՄ։ Վատիկանը ցանկանում է ունենալ իր ներկայացուցիչը Հաագայի կոնֆերենցիայում և յոյս ունի Գերմանիայի օգնութեան վրա՝ հեռացնելու համար առարկութիւններ իտալական կառավարութեան կողմից։

Կ. ՊՕԼԻՍ, 20 սեպտեմբերի։ Մեծ պետութիւնների անունից աւստրիական կառավարութեան յանձնած ազդու յիշատակագրին ի հետևանս. Դուռը յայտնեց իր դրական մերժումը՝ ճանաչել ֆինանսական կօնտրոլօրներին Մակեդոնիայում։ Ժանդարմերիայում ծառայող եւրոպական օֆիցէրները ասում են, որ Մակեդոնիայի դրութիւնը այժմ աւելի ծանր է, քան երբ և իցէ։ Թուրքիան մերժում է ընդունել Մակեդոնիայում ֆինանսական կօնտրոլ հաստատելու սկզբունքը, յայտնելով որ

այդ ծրագիրը միջամտութիւն է Թիւրքիայի ներքին գործերի վարչութեան մէջ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակուրիւն Անդէրսօնի

Լոյս տեսաւ 5-րդ գրքոյկը, բաժանորդների համար։

1) Երաժշտասէր Եանկօ. Սինկեվիչի . 5 կ.
2) Բեռլինի պաշարումը. Դոդէի . 5 »
3) Ինչու համար ապրել. Տօլստոի . 10 »
4) Մտքեր և Մտքեր. Տիրացեանի . 10 »
5) Միևնոյն դագաղում... Ց. Եսայեանի. 4 »

Գումարով գնողներին 25% զեղչ ճանապարհածախսով. կատարում ենք առանձին պատուէրներ զանազան գրքերի։ Այս գրքերի օգուտի մի մասը տրվում է վերջին դէպքերից ՃՏապածներին։

Հասցէ՝ Тифлисъ Дворцовая ул. домъ Цовяновыхъ квартира № 6 Книгоиздатель. А. А. Ованесянцъ Телефонъ № 1033.
(հ. ու.) 1—2

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով։

Ելիզավետինսկայա փողոց, 101, տելէֆոն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Մ. Գ. ԱՂԱԶԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—նեարդային, ներքին հ.
Պ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Պ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՉԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.
Պ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպնոզով, կատարվում միկրոսկոպիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և սոնտունների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Դիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից։
(չ.ու.կ.) 4—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Քաւոյեան

Վերադարձաւ Կովկասեան Հանքային ջրերից և վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։ Միզանցասեռական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ։ Առաւօտեան 9—12 ժամ, երեկոյեան 3—8 ժամ։ Միքայէլեան փողոց, № 55։ (ա. օ. յ. օր.մ.) 9—30

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վենէրական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրոսպեկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամանշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2. (ա. օ.) 26—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզային և սիֆիլիսաբանական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ, երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 20.
(ե. հ. շ. կ.) 20—30

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ
Ս. Գ. Շերամազանեանց

Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, բնակարան Լալայեանցի բնակարան։

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Թադէոսեան

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը, 9—11 ժ. առաւօտեան, և 6—7 ժ, երեկոյեան։ Գրիբոյեդովսկայա փող., տ. 15, տելէֆոն 1000։
(ե. հ. կ.) 2—10

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Սօֆիա Ի. Գէորգոտ-Լօշկ

Տեղափոխվել է Կազնաչէյսկի փողոց № 7, տուն իշխ. Թումանօվայի, Ալէքսանդրեան այգու դիմացը։ (կ.ե.հ.) 46—100

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Կայսերական թատրոնների արտիստ Լ. Դօնսկոյի անտրպրիզ

Այսօր, հինգշաբթի, սեպտեմբերի 21-ին
կը ներկայացվի
«ԳԻԿՕՎԱՑԱ ԴԱՄԱ»
օպերա 3գործ., 7 պատկ., երաժ. Զայկօվսկու, Լիբրէտտօ Մ. Զայկօվսկու։

Մասնակցում են՝ տ.տ. Գուբօվսկայա, Նիկիտսկայա, Կարրի, Միշեցկայա, Կարպօվա, պ.պ. Դօնսկոյ, Կարելին, Եվլախով, Տօմաշեվիչ, Զիստեակով, Դեմեանենկո, Ֆիլիպպով, Շեին

Գարերը կը դնէ բալէտմէյստր պ. Բեկեֆի։
Սկիզբը երեկոյեան ժամը 8 ին

Կապելմէյստր Ի. Գ. Գալիեվ։ Գլխաւոր ըէժիսօր Ն./Ն. Բօգօլիւբով։

Վաղը, ուրբաթ, սեպտեմբերի 23 ին կը ներկայացվի «ՖԱՈՒՍՏ», օպերա 5 գործ., երաժ. Գունօի, թարգմ. Կալսամիկովի։

Շաբաթ, սեպտեմբերի 24-ին Գալա ներկայացում, մասնակցութեամբ իտալացի յայտնի տէնօր Անջէլօ Գ՝ մբրայի։

Տօմսակները ծախվում են։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՂՂԱՎԱՆ
յայտնում է լնդհանրութեան, որ Քաղաքի Մսի Խանութները ժամանակաւորապէս փակվում են։ Նրանց բացման մասին առանձնապէս կը յայտարարվի։ 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի

Վերսկսեց ընդունելութիւնը յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բոթչէխի փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տելէֆոն № 11.
(ա. օ.) 3—10

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միքայել Գեղեվանօվի

Զղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը
Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տելէֆոն № 791։ (հ.շ.կ.) 5—150

ԲԺԻՇԿ
Ս. ՄԻՐԶՈՅԵԱՆ

Մասնագէտ Աչքի ճիւանդութիւնների, վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։ Առաւօտեան 1—3 ժամը. երեկոյեան 5—6 ժամը։ Սօլօլակայա փող. սեփ. տ։ 4—25

ԲԺՇԿԱՊԵՏ
ԱՒԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆԸ

Հիւանդները ընդունելու է Ալեկսանդրապոլում, այս սեպտեմբեր ամսի 20-ից սկսած մինչև հոկտեմբեր ամսի վերջը։
(կ.ե.հ.) 3—3

Լոյս տեսաւ
ՀԵՏԵՒԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՍ

1) Զեռնարկ կրօնական գիտելիքների. ա. տարի. (բարոյա կրթական խօսքու վրայ սաների հետ՝ աղօթքների և տէրունական գլխաւոր տօների հետ զուգորդուած . . . . 60 կ.
2) Նոյնը . . . . . 40 կ.
3) Նոյնը . . . . . 40 կ.
4) Մի պտոյտ Հայ Մամուլի, հոգևորականների և ժողովրդի շուրջը։ (Քահանայական ոճիկի և կանոնադրութեան յաւելուածով։ Սրա արդիւնքի կէսը յատկացված է տարւոյս արեան ամիսների հայ արկածեալների օգտին) . 40 կ.

Վաճառվում են Թիֆլիսի կենտրօնական, Կովկասեան և Գուտտենբերգ գրավաճառանոցներում և հեղինակի մօտ։ Հասցէն. Մարիամեան-Յոզնանեան դպրոց։

Արքէն աւ. քահ. Բագրատունի
(ե. հ.) 2—6

Ցարութիւն Թումանեան
Համառօտ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ
Հայոց աշխարհաբար լեզուի
Ստորին եւ միջնակարգ դպրոցների համար
Գինն է 40 կոպէկ։

Դիմել՝ Тифлисъ. Чавчавадзевская ул. домъ Маркарова № 25-а, Арутюну Туманьяну.
(հ. շ. կ. ե.) 5—5

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ և ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
գաւառները գնալու համար երեք ամիս ժամանակով

Պահանջվում են Բժիշկներ
և ՖԷԼԴՇԷՐՆԵՐ

Ռոճիկ կը տրվի բժիշկներին՝ ամսական 300 րուբլի, ճանապարհածախս 50 ր., ֆելդշէրներին՝ ամսական 70 ր. և ճանապարհածախս—25 ր։ Դիմել մինչև սեպտեմբերի 15 ը Բժշկ. Կ. Ստեփանեանին (Ново-Бебутовская. д. № 1).

ՀՐԱՒԷՐ
Պատշաճաւոր իշխանութեան թոյլատրութեամբ ուրբաթ, սեպտեմբերի 23-ին 1905 թ-ի երեկոյեան ժամը 5-ին (Դվօրցօվայա փող. «Վիկտորիա» հիւրանոցի դահլիճում) կայանալու է
ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ժողովին մասնակցելու են բացառապէս հայոց եկեղ. ծխակ. դպրոցների նախկին ուսուցիչները և վարժուհիները ու նրանք, որոնք ցանկանում են ուսուցչութիւն անել նոյն դպրոցներում, և որոնք ունեն պատշաճաւոր ուսուցչութեան աւարտման վկայական։

Ժողովի նպատակն է բարելաւել ուսուցիչների նիւթական և բարոյական ապագան։ հ.ո. 1—2

Մի ուսուցիչ ցանկանում է սենեակ և ճաշ ունենալ մի ինտելիգէնտ ընտանիքում. կը պարապի երեխաների հետ հայերէն և ֆրանսերէն, տեսական և գործնական ձևով։

Պայմանների մասին դիմել գրաւոր՝ Захаревскій переул. д. Джанибекова, около Еврейской синагоги Айвазяну. (ա. օ.) 2—5

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՕՆԻ

Յատկապէս պատրաստած պետական դպրոցների համար, (թոյլատրված հոգևոր և ուսումնարանական վարչութիւններից) աշխատասիրութիւն Եղնիկ աւագ քահ. Երզնկեանի։

I. Առաջին գրքոյկ, պատրաստական դասարանների համար «Գլխաւոր աղօթքները (իրանց բացատրութիւններով) և տօների համառօտ պատմութիւնները 5-դ տպ. գինն է 20 կոպէկ։

II. Երկրորդ գրքոյկ. «Հին-ուխտ» (30 դասերի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյական զրոյցներով հանդերձ) 3-դ տպ. գինն է 30 կոպէկ։

III. Երրորդ գրքոյկ. «Նոր-ուխտ» (32 դասերի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյական զրոյցներով հանդերձ) գինն 30 կոպէկ։

Գրավաճառների և ուսուցիչների համար 30% զիջում, առանց ճանապարհածախքի։ Դիմել՝ Тифлисъ, прот. Езнику Ерзинкянцъ կամ Тифлисъ, Центральный книжній магазинъ.
(հ.հ.շ) 24—25

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՐՈՒՍՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ Ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։

Պարապմունքի առարկաներն են.

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Առևտրական թղթակցութիւն։ 3) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղումն ամենավատ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համբիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Էրէմենկօսնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով իրանց գործի մասնագէտ մարդիկ, որոնք հաստատել են իրանց պաշտօնում Ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1905 (սեպտեմբերի 15-ից պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ 60 րուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացը աւարտողներին տրվում են, Ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н. В. Абрамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու. Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (հ. կ. ե.) 21—25

1905 թ. սեպտեմբերի 1-ից բացվում է
Ս. Լ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ելիզավետինսկի փողոց, սեփական տուն № 116 (Կիրօչնի փողոցից երրորդ տունը)։
Ֆրանսերէն, գերմաներէն լեզուների եւ ՄՈՒԶԻԿԱՑԻ բեօրիան ու պրակտիկան։

Հրաւիրված են փորձված դասատուներ։ Պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար մինչև III դասարան։ Դպրոցի և պանսիօնի շինութիւնը լիապէս համապատասխանում են առողջապահութեան պահանջներին։ Ընդունելութիւնը օգոստոսի 20-ից։
(ե. հ. կ.) 10—10

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Тифлисъ, Сололакъ, Лермонтовская ул. № 9)

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական Թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաբանութիւն համբիչի վրա. 5) Առևտրական Թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Զրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա։ Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1 ից։ ամենայն օր, առաւօտեան ժամը 10 ից մինչև 12 ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսերի հիմնադրի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսերի հիմնադրի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (կ. ե. հ.) 21—25

ԳԷՊՕ
ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„Եղբ. Յակոբջանեան եւ Սարգսեանց“

Պատրաստի հագուստեղէնի խանութում (Միքայէլեան կամուրջ, Քամոյեան տուն № 25—30) մշտական ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, աղջամարդկանց և երեխաների համար ամենավերջին ամսվայ սեզօնի տարազով պատրաստած հագուստներ։

Գները չափաւոր են և առանց սակարկութեամբ։ (չ. հ.) 71—100

Дозволено цензурою. Тифлисъ, 21-го сентября 1905 г
Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатная типографскаго Т—ва «Гермесъ». Мад. ул. № 15.